Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՋՐԵՑ ՎՅՈՒԳՈ

# ԱՆԸՆԴՀԱՏ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԸ

ՎՃՌՈՒՄՆԵՐԻ, ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

---

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԽ-Ի ՅԵՎ ԺՈՂՏՆՏԳԵՐԽՈՐՀԻ 1929—ՅԵՐԵՎԱՆ

331.81
Վ

ԿԱԶՄԵՑ ՎՅՈՒԳԻ

A III/1619

# ԱՆԸՆԴՀԱՏ

# ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԸ

(ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ, ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

Հրատարակություն ՀԱՄԽ-ի յեվ ՀՍԽՀ ժողտնտգերխորհի

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 410
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 2835 (բ)
ՏԻՐԱԺ 2000

# ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄ. (Բ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏԻ ԴԻՐԵԿՏԻՎՆԵՐԸ ՈՒՂՂՎԱԾ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ—ԱՆԸՆԴՀԱՏ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

*Նկատի ունենալով, ձեռնարկությունները և հիմնարկությունների անընդհատ արտադրական շաբաթի փոխանցման քաղաքական ու տնտեսական խոշոր նշանակությունը և փոխանցման հետ կապված դժվարությունները ՀԱՄ. ԿՈՄ. (բ) Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն առաջարկում է կուսակցական կազմակերպություններին, անընդհատ արտադրությանն ավելի հաջող և կազմակերպված անցնելու համար, մոբիլիզացիայի յենթարկել կուսակցության և պրոֆմիությունների ամբողջ ուժերը:*

*1. Բանվորական լայն խավերի և աշխատավորության մեջ անմիջապես պետք է ծավալել բացատրական աշխատանքներ, յերկրի արդյունաբերության տեմպի ե՛լ ավելի ուժեղացման գործում, անընդհատ արտադրության ունեցած նշանակության մասին: Անհրաժեշտ է պարզաբանել բանվորական և գյուղացիական մասսաներին, վոր անընդհատ արտադրության անցնելն ավելացնում է հիմնական կապիտալի ոգտագործումը, տնտեսում է կապիտալ շինարարության մեջ ներդրվող միջոցների ծախսումը, արագացնում է ինքնարժեքի իջեցումը և նպաստում է բանվոր դասակարգի տնտեսական դրության ավելի արագ բարելավմանը, և մասսաների կուլտուրական լավագույն սպասարկմանը: Անընդհատ արտադրությունը տանում է դեպի գործազրկության կրճատումը և վորակյալ բանվորների կադրերի լայնացումը: Այդ ձեռնարկման հետևանքով արդյունաբերության արտադրանքի, արտադրության միջոցների, գյուղատնտեսական մեքենաների, տրակտորների, պարարտանյութերի, ինչպես նաև լայն սպառման ապրանքների ավելացումը, ել ավելի կամրացնի գյուղի և քաղաքի դաշինքի բազան:*

*2. Անհրաժեշտ է վորպեսզի տեղական, կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերպությունները—ձեռնարկություններն ու հիմնարկություններն անընդհատ արտադրության փոխանցելու պլանի մշակման աշխատանքներում— ունենան ակտիվ մասնակցություն: Այդ պլանը պետք է մշակվի և կենսագործվի տվյալ ձեռնարկության բանվորական լայն մասսայի մասնակցությամբ, պարտադիր կերպով այդ աշխատանքներին ներգրավելով ճարտարագետ-տեխնիկական ուժերը, այն հաշվով վորպեսզի փոխանցումը փաստացիորեն կատարվի, այդ պլանը կառավարական Կենտրոնական Համձնաժողովի կողմից վերջնականապես հաստատվելուց հետո:*

*3. Տնտեսական մարմինների անընդհատ արտադրության փոխանցելու ծրագիրը մշակելիս, պետք է հաշվի առնել՝ հում նյութի, բանվորական ուժի,*

կահավորման դրության, ընթացիկ և հիմնական վերանորոգումների և այլ խնդիրները։

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել բանվորական ուժի, առաջին հերթին ձեռնարկության ավելցուկ բանվորների, ինչպես նաև բորսաներից հրավիրված բանվորների նպատակահարմար օգտագործմանը։ Մասնավորապես անհրաժեշտ է կազմակերպել բանվորների վորակի բարձրացման դասընթացներ, առաջ քաշելով գրագետ և ավելի ընդունակ սևագործ բանվորներից։

4. Անընդհատ արտադրության մեջ բանվորների և ծառայողների ամենալայն խավերին ներգրավվելու հետ կապված, անհրաժեշտ է բարելավել նրանց սպասարկումը կուլտ-կենցաղային հաստատությունների կողմից, կապելով այդ՝ նոր կենցաղի խորացման և նրա էլեմենտների զարգացման հիմնական խնդրի հետ։

ա) Անընդհատ արտադրության փոխանցելու հետ միասին, անհրաժեշտ է վերադասավորել հիմնարկների առանձնապես սոցապգանձարկղների, աշխատանքի բորսաների, բժշկական օգնության մարմինների, կոմունալ տնտեսության, հանրակրթական և մեծահասակների պրոֆեսիոնալ կրթության հաստատությունների աշխատանքների ժամանակը և նրանց կարգը։

բ) Անհրաժեշտ է վերակազմակերպել կուլտ-լուսավորական և կենցաղային հաստատությունների (ճաշարաններ, մսուրներ, բաղնիքներ, մանկական հրապարակներ, թատրոններ, կինոներ, ցուցահանդեսներ և այլն) աշխատանքները, հարմարեցնելով այն զանազան հերթերին համաչափ կերպով սպասարկելու և հետագայում այդ հաստատություններն աստիճանաբար փոխանցել անընդհատ արտադրական շաբաթի։

գ) Անհրաժեշտ է աշխատանքների նոր պայմաններին հարմարեցնել նաև հաղորդակցության միջոցների աշխատանքները շրջաններում, (տրամվայներ, բանվորական գնացքներ և այլն)։

5. Ձեռնարկությունների և հիմնարկությունների աշխատանքային կյանքի հիմնական վերակազմումն և դրա հետ կապված մասսաներին լայնորեն մոբիլիզացիայի ենթարկելու խնդիրը, կտրականապես պահանջում է արագացնել բանվոր-դասակարգի բոլոր կազմակերպությունների շարքերը և աշխատանքների կարգը վերակազմակերպելու առթիվ ՀԿԿ(բ) Կենտրոնական Կոմիտեյի դիրեկտիվների կենսագործումը։ Մասնավորապես կուսակցության, կոմյերիտական, առանձնապես պրոֆեսիոնալ կազմակերպությունների, վողջ տնտեսական աշխատանքները ձեռնարկություններում, պետք է վերակառուցվի և հարմարեցվի հերթերի ու հանգստի նոր հերթականության և վերակազմակերպվի այնպես, վորպեսզի այդ մարմինների աշխատանքները վճռականորեն մոտեցվի ցեխի, հերթի և բանվորների խմբակներին։

6. Կուսկազմակերպությունները պետք է վճռականորեն պայքարեն, դեպի անընդհատ արտադրության նախապատրաստումը և նրան անցնելու ձեռնարկումներին—բյուրոկրատական մոտեցման դեմ, մոբիլիզացիայի ենթարկելով այդ հարցերի շուրջն աշխատավորների լայն մասսաներին, հիմք ունենալով նրանց ձեռներեցության մաքսիմալ զարգացումը, ծավալելով սոցիալիստական լայն մրցություն, հիմնարկությունների և ձեռնարկությունների միջև

—ավելի հստակ և կազմակերպված ձևով, նախապատրաստվելու և կենսագործելու ձեռնարկությունների անընդհատ արտադրության փոխանցելու ծրագիրը:

ՀԱՄ ԿԿ(բ) Կենտկոմն ընդգծում է, վոր ձեռնարկումների անցկացումը, կապված է խոշոր դժվարությունների հետ, վոր այդ ձեռնարկումները կհանդիպեն բանվորների հետամնաց խմբերի, տեխնիկների և մասնագետների դիմադրության և պահպանողական վերաբերմունքին:

Պրոլետարական դիկտատուրայի դասակարգային թշնամիներն անխուսափելիորեն կձգտեն օգտագործել հին կենցաղի բոլոր մնացորդները և նախապաշարումները, մասնավորապես կրոնը, վորպեսզի ուժեղացնեն հարձակումներն ընդդեմ կուսակցության քաղաքականության, ընդդեմ սոցիալիստական ռեկոնստրուկցիայի:

Այդ պատճառով էլ անընդհատ արտադրության փոխանցումը, կուսակցական կազմակերպությունները պետք է օգտագործեն նոր հարձակում գործելու դասակարգային թշնամու վրա, ուժեղացնելու մասսաների կոմունիստական դաստիարակությունը, միաժամանակ վճռական հակահարված տալ կուսակցության ներսում աջ օպորտյունիստական էլեմենտներին, նրանց անհավատությանը և յերերումներին կապված նոր բարդ խնդիրների հետ:

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԱՆԸՆԴՀԱՏ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԻ ՄԱՍԻՆ

Բանվոր դասակարգի և գյուղացիության չքավոր ու միջակ մասսաների առաջ դրված են ԽՍՀ Միության տնտեսական շինարարության և սոցիալիստական վերակառուցման խոշոր խնդիրները: Այդ խնդիրները նախատեսված են Խորհուրդների 5-րդ համագումարի կողմից, հաստատված 5-ամյա պլանում: Ներկայումս այդ ծրագրի կենսագործումն արագացնելու համար հայտնաբերվում են մի շարք հնարավորություններ: Այդ հնարավորությունները ստեղծվում են մասսաների ստեղծագործական ձեռներեցության աճումով, վորը աննախընթաց արտահայտությունն է գտել, աշխատավորության սոցիալիստական մրցման և յերկրի տնտեսական շինարարության պլանային ձեռնարկումների հետագա ամրացման մեջ:

Բանվոր դասակարգի սոցիալիստական գիտակցության աճումը և 7-ժամյա բանվորական օրվա կիրառման հետևանքով արդեն իսկ ձեռք բերված նվաճումներն այժմ հնարավորություն են տալիս ԽՍՀ Միության ձեռնարկությունները և հիմնարկությունների անընդհատ արտադրական կյանքի փոխանցման միջոցով, սոցիալիստական շինարարության գործում կատարել, նոր և խոշոր քայլ:

**ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, ՎՈՐ ԱՆԸՆԴՀԱՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՀԱՆԳՍՏԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՆՈՐՄԱՆԵՐԸ, ՈՒԺԵՂԱՑՆԵԼՈՒ ՅԵ ՅԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒԺԸ, ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՅԵ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԼԱՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ, ԿՐՃԱՏԵ–**

·ՂԻ ՅԵՆ ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՌԵԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՅԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՏԱԼՈՒ ՅԵՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆԱ ԴՐԱՆՈՎ ԻՍԿ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՉԱՓՈՎ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՅԵՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԶԲԱՂՎԱԾ ԲԱՆՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ:

*Հաշվի առնելով նաև, վոր դրանով, իսկ բանվորների և գյուղացիների ինչպես նաև բանվոր-դասակարգի տնտեսական ու կուլտուրական կյանքի դըրության հետագա լավացման գործում, ստեղծվում են նոր և մեծ հնարավորություններ, ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է՝*

1. *Գտնել անհրաժեշտ* 1929–30 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐՎԱՆԻՑ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԸՆԴՀԱՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՊԼԱՆԱՉԱՓ ՅԵՎ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ:

2. *Ձեռնարկությունների և հիմնարկությունների փոխանցումն անընդհատ արտադրության, պետք է կատարվի նրանցում զբաղված բանվորների և ծառայողների շահերի լրիվ պահպանումով:*

*Մասնավորապես ձեռնարկությունները և հիմնարկություններն անընդհատ արտադրության փոխանցելուց հետո էլ* ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲԱՆՎՈՐԻ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՄԱՐ ՉՊԵՏՔ Ե ՊԱԿԱՍԻ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՆԳՍՏԻ ՈՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ ԻՆՉՊԵՍ ՆԱՅԵՎ ՉՊԵՏՔ Ե ԱՎԵԼԱՆԱ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ:

3. *Հանձնարարել ԽՍՀ Միության Պետպլանին՝*

*ա) ԽՍՀ Միության Ժողտնտխորհի, Ներքառժողկոմատի, Ճանապարհների և Հաղորդակցության Ժողկոմատի, Աշխժողկոմատի, Փոստ-Հեռ. Ժողկոմատի, Միութենական հանրապետությունների, Կառավարության ու Կոոպերատիվ կենտրոնների հետ համաձայնեցնելուց հետո և այդ աշխատանքներին համապատասխան պրոֆեսիոնալ կազմակերպություններին մասնակից դարձնելուց հետո, սահմանել* 1929–30 *տարվա ընթացքում անընդհատ արտադրության անցնող ձեռնարկությունների և հիմնարկությունների փոխանցման ծրագիրը:* ԸՍՏ ՎՈՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ՝

1) ՎԱՌԵԼԻՔԻ, ՀԱՆՔԱՅԻՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ, ԵՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (*պետական, կոոպերատիվ և հասարակական*) *մասնավորապես յերկաթուղային, ջրային և խճուղային նոր ճանապարհների շինարարությունը:*

2) *Մշակող արդյունաբերության* ԱՅՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՊԱՀՈՎԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՈՒՄ ՆՅՈՒԹՈՎ ՅԵՎ ՎԱՌԵԼԻՔՈՎ, *մասնավորապես առաջին կետում մատնանշված ձեռնարկությունների անընդհատ արտադրության փոխանցելու հետևանքով* 1929–30 *թվի ընթացքում ավելացած արտադրանքի հաշվին:*

3) ԱՅԼ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԵԽԵՐԸ ՅԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԲԱԺԻՆ–

ՆԵՐԸ, ՎԵՐՈՆՑ ՇՏԱՊ ԼԱՑՆԱՑՈՒՄԸ ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ՀԱՄԱՐՎՈՒՄ։

4) ԲԵՌՆԱՎՈՐՄԱՆ–ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ ՅԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ։

5) ԱՆՏԱՌԱՆՑՈՒԹԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ։

6) ՊԵՏԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՄԵԾԱՔԱՆԱԿ ՅԵՎ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

բ) Ժողտնտեսության 1929–30 տնտեսական տարվա ստուգիչ թվերի նախագծում նախատեսնել այն փոփոխությունները, վորոնք առաջանալու յեն անընդհատ արտադրության կենսագործման հետևանքով, համաձայն այն պլանի, վոր մատնանշվեց ներկա հոդվածի «ա» կետում։

գ. Ի նկատի ունենալով, վոր անընդհատ արտադրության կիրառման հետ կապված տարվա հանգստի որերի ավելի համաչափ բաշխումը բանվոր դասակարգի կուլտուրական և կենցաղային պահանջները սպասարկելու և հանգիստն oգտագործելու ավելի լայն հնարավորություն է ստեղծում, առաջարկել միութենական հանրապետությունների կառավարություններին Աշխժողկոմատի և ՀԱՄԿԽ-ին շտապ կարգով ներկայացնել ԽՍՀ Միության Ժողկոմխորհին իրենց առաջարկությունները, անընդհատ արտադրության անցած ձեռնարկություններում և հիմնարկություններում զբաղված [illegible] հիմնարկություններին [illegible] և [illegible] առաջարկություններին [illegible] անհրաժեշտ միջոցների մասին.

5. Համաձայնեցնել ԽՍՀ Միության Աշխժողկոմատին և ՀԱՄԿԽ-ին 1930 թ. ապրիլի 20-ին ներկայացնել ԽՍՀ Միության Ժողկոմխորհին առաջարկություններ՝

ա) Ինչպես հանգստի որերի թիվը, նույնպես և նրանց բաշխումը, սահմանելու, ըստ վորի ապահովել բանվորների կուլտուր–կենցաղային կարիքների լավ սպասարկումը։

բ) Գոյություն ունեցող Աշխատանքի Որենսդրության փոփոխությունները, վորոնք պայմանավորված են ձեռնարկությունները և հիմնարկությունները անընդհատ արտադրության փոխանցումով։

6. Հանձնարարել ԽՍՀ Միության Ժողտնտխորհին մշակել անընդհատ արտադրության փոխանցված ձեռնարկությունները, ճարտարապետ–տեխնիկների կադրերով ապահովելու հարցը, առանձնապես նրանց հիմնարկություններից դեպի արտադրություն փոխադրելու միջոցով և այդ առաջարկությունները ներկայացնել ԽՍՀՄ Ժողկոմխորհին, որենսդրական կարգով հաստատելու համար։

7. Ի նկատի ունենալով, անընդհատ արտադրության անցնելու դժվարությունները, և առանձին բարդությունն ու ավյալ կարևոր ձեռնարկումն անցկացնելու գործի վրա մշտապես հետևելու և հսկելու անհրաժեշտությունը՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ սահմանել ձեռնարկությունները և հիմնարկություններն անընդհատ արտադրության փոխանցելու կառավարական հանձնաժողով՝ Ժողկոմխորհի և Աշխատանքի

ու Պաշտպանության Խորհրդի նախագահի տեղակալներից մեկի նախագահությամբ և Պետպլանի, Ժողտնտգերխորհի, ԽՍՀՄ Աշխժողկոմատի, Ճանապարհների և Հաղորդակցության Ժողովրդական Կոմիսարիատի, ԽՍՀՄ Ֆինժողկոմատի, ԽՍՀՄ Առևտրի ժողկոմատի, ՀԱՄԿԽ-ի, Կոմակադեմիայի, միութենական հանրապետությունների լուսժողկոմատների, իրենց համաձայնությամբ մեկ ներկայացուցչի և Մոսկվայի ու Լենինգրադի խորհրդների ներկայացուցիչների կազմով:

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների խորհրդի
նախագահի տեղակալ՝ ՌՈՒԴԶՈՒՏԱԿ

ԽՍՀ Միության Ժողովրդական կոմիսարների խորհրդի և
Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի գործերի կառավարիչ
տեղակալ՝ Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ

Մոսկվա, Կրեմլ 1929 թ. 26 օգոստոսի.

## ԱՆԸՆԴՀԱՏ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԻ ԱՆՑՆՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՅԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՎՈՐՈՇՄԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

### *ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ՝*

*ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում ե՝*

1. *Հաստատել և անմիջապես գործադրության մեջ դնել անընդհատ արտադրական շաբաթի անցնող հիմնարկների և ձեռնարկների բանվորական ժամանակի և հանգստի ժամանակի մասին կայացրած վորոշումները:*

2. *Ի նկատի ունենալով, անընդհատ արտադրական շաբաթի անցման պատճառով, բանվորական ժամանակի և հանգստի հարցերի ճիշտ վորոշման խոշոր կարևորությունը և այդ հարցերում բանվորական լայն մասսաների կարծիքի և գործնական փորձի հաշվեառման անհրաժեշտությունը, առաջին հոդվածում մատնանշված վորոշումը քննության առնել, բանվորական ժողովներում, մամուլում, խորհրդային և հասարակական կազմակերպություններում:*

3. *Հանձնարարել Աշխատ. և Պաշտպանության Խորհրդին առընթեր գործող, ձեռնարկությունները և հիմնարկությունները, անընդհատ արտադրական շաբաթի փոխանցող կառավարական հանձնաժողովին, կազմակերպել առաջին հոդվածում մատնանշված վորոշման առթիվ առաջադրվող բոլոր առաջարկությունների և նկատողությունների հաշվեառումը և մշակումը:*

4. *Խնդրել ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությանը, առաջին հոդվածում մատնանշված վորոշումը՝ բանվորական լայն մասսայի ունեցած կարծիքի հիման վրա, մտցնել ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 5-րդ գումարման մոտակա նստաշրջանի քննությանը և վերջնական հաստատմանը:*

*ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ՝*
*Ա. Ի. ՌԻԿՈՎ*

*ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի գործերի կառավարչի տեղակալ՝*
*Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ*

Մոսկվա-Կրեմլ, 24 *սեպտեմբերի* 1929 թ.

## ԱՆԸՆԴՀԱՏ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԻՆ ԱՆՑՆՈՂ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԵՐԻ ՄԱՍԻՆ

*Անընդհատ արտադրական շաբաթի անցնող հիմնարկություններում և ձեռնարկություններում, աշխատանքի և հանգստի ժամերի համաչափ բաշխման միջոցով և գոյություն ունեցող բանվորական տարեկան ժամերի քանակի ու հանգստի օրերի ընդհանուր թիվը պահպանելու ճանապարհով, արտադրական նորմալ ռեժիմ ստեղծելու նպատակով, ԽՍՀՄ ԺԿԽ-ն վորոշում ե՝*

*1. Անընդհատ արտադրական շաբաթի անցնող բոլոր ձեռնարկություններում—բացի շինարարական և սեզոնային աշխատանքի բնույթի ձեռնարկություններից, սահմանվում ե 5-որյա աշխատանքային շաբաթ (4 որ աշխատանք և մեկ որ հանգիստ):*

*Անընդհատ արտադրական շաբաթի անցնող բոլոր հիմնարկություններում նույնպես սահմանվում ե աշխատանքի 5-որյա շաբաթ (4 որ աշխատանք մեկ որ հանգիստ): Ըստ վորքի 6-ժամյա աշխատանքի օր ունեցող հիմնարկություններում սահմանվում ե 7-ժամյա աշխատանք (հաշվելով նաև հանգստի կես ժամյա դադարը):*

*Առանձին հիմնարկությունների և ձեռնարկությունների աշխատանքների առանձնահատուկ պայմաններից յելնելով, վորպես բացառություն կարելի յե սահմանել աշխատանքային ուրիշ շաբաթ:*

*ա) Համամիութենական նշանակություն ունեցող ձեռնարկություններում և հիմնարկություններում, ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարիատների և համամիութենական այլ մարմինների թույլտվությամբ, վորոնց յենթակա յեն համապատասխան հիմնարկությունները և ձեռնարկությունները:*

*բ) Հանրապետական նշանակություն ունեցող, հիմնարկ-ձեռնարկներում, —դաշնակից հանրապետությունների Ժողկոմատների և հանրապետական մարմինների թույլտվությամբ:*

*գ) Տեղական նշանակություն ունեցող հիմնարկությունների և ձեռնարկությունների համար, վորոնք յենթակա յեն տեղական մարմիններին, (թույլատվությամբ յերկրային և նահանգային կամ ինքնավար հանրապետական մարմիններից,, նրանից վոչ ցածր, իսկ դաշնակից հանրապետություններում, վորտեղ կա մարզային բաժանում—թույլատվությամբ մարզային մարմինների և նրանցից վոչ ցածր):*

*Հիշված թույլատվությունները տրվում են ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների Աշխժողկոմատների ու նրանց տեղական մարմինների, ինչպես նաև ՀԱՄԿԽ-ի և հանրապետական ու տեղական միջմիութենական համապատասխան կազմակերպությունների միջոցով: Շինարարական և ժամանակավոր աշխատանքի բնույթ կրող ձեռնարկությունների համար, բանվորական շաբաթվա տևողությունը հատուկ կարգով սահմանվում ե—աշխա-*

տանքի և Պաշտպանության Խորհրդին կից հիմնարկությունները և ձեռնարկությունները, անընդհատ արտադրության փոխանցելու կառավարական հանձնաժողովի կողմից:

Ժողովի կողմից:

2. 1-ին հոդվածում մատնանշված 5-օրյա շաբաթին անցած հիմնարկությունների և ձեռնարկությունների յուրաքանչյուր աշխատակցի շաբաթական հանգստի օրերի քանակը, ամբողջ տարվա համար 72-ից պակաս չպետք է լինի, հաշվելով նաև հերթական արձակուրդի ընթացքում յեղած հանգստի օրերը:

3. Առաջին հոդվածում մատնանշված հիմնարկությունների և ձեռնարկությունների աշխատակիցների անընդհատ շաբաթական հանգստի տևողությունը, 39 ժամից չպետք է պակաս լինի:

Հանձնարարվում է ԽՍՀ Միության Աշխժողկոմատին առանձին ձեռնարկությունների և հիմնարկությունների համար, յելնելով նրանց ճաշվա ընդմիջումների տևողությունից, սահմանել առանձին կարգ, վորը կարող է տարբերվել սույնից:

Յերկու և ավելի հերթերով աշխատող հիմնարկությունների և ձեռնարկությունների աշխատակիցների համար, թույլատրվում է յուրաքանչյուր շաբաթվա հանգստի ժամերի գումարային հաշվառում, սակայն վոչ ավել քան 4 բանվորական շաբաթից: Այդ դեպքում յուրաքանչյուր շաբաթվա հանգստի տևողությունը կարող է 39 ժամից ավել կամ պակաս լինել, բայց վոչ պակաս քան 24 ժամից և հաշվետու շրջանում միջին հաշվով, վոչ պակաս 39 ժամից:

4. 1-ին հոդվածում սահմանված հիմնարկություններում և ձեռնարկություններում, յուրաքանչյուր շաբաթվա համար, աշխատակիցների հանգիստը տրվում է հերթականորեն և տարբեր օրեր, համաձայն հիմնարկությունների և ձեռնարկությունների ադմինիստրացիայի սահմանած գրաֆիկների, վորը համաձայնեցվում է գործարկոմ-տեղկոմի կամ նրանց փոխարինող մարմինների հետ:

5. Անընդհատ շաբաթվա ամեն մի աշխատակցին ըստ սահմանած օրացույցի հանգստի օր չտալն արգելվում է:

Բացառիկ դեպքերում, յերբ աշխատակիցն աշխատել է իրեն համար սահմանած հանգստի օրը, արդյունաբերության համար անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներում և այլն, այդ դեպքում պետք է աշխատակցին հանգիստ տրվի մի ուրիշ օր առաջիկա բանվորական յերկուշաբաթների ընթացքում:

Շաբաթվա հանգստի օրը դրամական փոխհատուցումով փոխարինելը չի թույլատրվում:

6. 1-ին հոդվածում մատնանշված հիմնարկություններում և ձեռնարկություններում արգելվում է աշխատել հեղափոխական հետևյալ օրերին՝

ա) 1905 թ. և Վ. Ի. Լենինի հիշատակի օրը (հունվարի 22-ը):

բ) Ինտերնացիոնալի օրը (Մայիսի մեկը և յերկուսը):

գ) Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձի օրերը (նոյեմբերի 7—8-ը):

Այս կարգը չի տարածվում անընդհատ գործող ձեռնարկությունների վրա, վորոնց արտադրական և տեխնիկական պայմաններից յելնելով, դադարը անհնարին է և այն ձեռնարկությունների և հիմնարկությունների համար, վորոնցում դադարը անհնարին է աշխատանքի հասարակական բնույթի պատճա-

ռով (հիվանդանոցներ, հեռախոս, կայարաններ, էլեկտրոկայաններ, ջրմուղ և այլն), նույնպես և վերանորոգման անհրաժեշտ աշխատանքներում:

Մնացած հեղ. տների տնակատարությունը կատարվում է ռ-ռանց աշխատանքից ազատվելու, բանվորների և ծառայողների աշխատանքը նոր տարվա և կրոնական բոլոր տոն օրերին ընթանալու յն ընդհանուր հիմունքներով:

*Ծանոթություն.*—Հեղափոխական տները բանվորական չաբաթվա մեջ չեն մտնում:

7. Հեղ. տներին կատարված աշխատանքը վարձատրվում է համաձայն 6–րդ հոդվածի 2–րդ մասի:

ա) Ժամավարձով վճարելու դեպքում, տարիֆային դրույքի կրկնակի չափով, մտցնելով սահմանած այլ վճարումները:

բ) Գործարքային վարձատրության դեպքում, գործարքային կրկնակի գնահատությամբ:

Դրամական փոխհատուցումը աշխատակցի համաձայնությամբ, կարելի յե փոխարինել ուրիշ հանգստի օրով:

8. Բոլոր մնացած օրերում, բացի հեղափոխական օրերից, արտաժամյա աշխատանքը վարձատրվում է ընդհանուր հիմունքներով (համաձայն Աշխատանքի Օրենսգրքի):

9. 1–ին հոդվածում մատնանշված բոլոր հիմնարկությունների, ձեռնարկությունների բանվորական ժամանակի տևողությունը—հեղափոխական օրերի և չաբաթվա հանգստի օրերի նախօրյակին—հավասարեցվում է առվորական օրերի բանվորական ժամանակի տևողությանը:

10. Անընդհատ գործող ձեռնարկություններում և հիմնարկություններում, թույլատրվում է հաշվեառման շրջանի համար (ժամանակաշրջան), հերթերի հերթականության սահմանած գրաֆիկների հիման վրա, բայց վոչ ավելի քան մեկ ամիս ժամանակաշրջանի համար, բանվորական ժամանակի գումարային հաշվեառում: Այս դեպքում բանվորական նորմալ ժամանակ համարվում է այն բանվորական ժամանակը միայն, վորը չի գերազանցում հաշվեառման յենթակա շրջանի վրա ընկնող բանվորական ժամանակի նորմալ ժամերի թվից:

Տվյալ հոդվածի գործադրման կարգը սահմանվում է ԽՍՀ Միության Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատի կողմից:

11. 1–ին հոդվածում մատնանշված ձեռնարկությունների և հիմնարկությունների աշխատակիցների հերթերի միջև և այլն հանգստի տևողությունը համենայն դեպս ճաշի ընդմիջումի հետ միասին չի կարող պակաս լինել, քան հանգստի նախօրյակի օրվա (հերթի) աշխատանքի տևողության ժամանակաշրջանի կրկնակի չափով:

12. Հավաքական և աշխատանքային պայմանագրերի մեջ կարող է նախատեսնվել 1–ին հոդվածում մատնանշված ձեռնարկությունների և հիմնարկությունների աշխատակիցների պարտականությունները, տարբեր արհեստանոցներում, ցեխերում, տարբեր դազգյահների վրա աշխատանքներ կատարելը, կամ թե տարբեր վորակի աշխատանքներ կատարելու պարտավորությունից:

Տվյալ դեպքում աշխատավարձի ձևը, կարգը և չափը, սահմանվում և կողմերի համաձայնությամբ։

13. 1-ին հոդվածում մատնանշված այն ձեռնարկությունների և հիմնարկությունների նկատմամբ, վորոնց բանվորական ժամանակը կարգավորվում և հատուկ վորոշումով (յերկաթուղային տրանսպորտ, ջրային տրանսպորտ և այլն), սույն վորոշումը գործադրվում և համապատասխան հատուկ վորոշումներից բղխող փոփոխություններով։

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի նախագահ՝ Ա. Ի. ՌԻԿՈՎ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի և Աշխատանքի ու Պաշտպանության
Խորհրդի գործերի կառավարչի տեղակ. Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ

Մոսկվա—Կրեմլ
24 սեպտեմբերի 29 թ.

## ԱՆԸՆԴՀԱՏ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԻ ԱՆՑՆՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑՈՒՄ ԶԲԱՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

### *Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ՝*

*ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է՝*

1. *Նպատակ ունենալով ապահովել անընդհատ արտադրական շաբաթի անցնող արդյունաբերական ձեռնարկությունների և նրանցում զբաղված բանվորների կանոնավոր սպասարկումը, պետք է համապատասխանորեն կազմակերպեն իրենց աշխատանքները, նրանց սպասարկող բոլոր պետական, կոոպերատիվ և հասարակական հիմնարկությունն ու ձեռնարկությունները: Այդ վերակազմակերպումը պետք է կատարվի հետևյալ կերպ՝*

*ա) Իրենց հերթին անընդհատ արտադրական շաբաթին փոխանցելու միջոցով:*

*բ) Իրենց աշխատանքների այնպիսի բաշխում շաբաթվա օրերի և ուտակայի մասերի վրա, վորը կապահովի բանվորների և ծառայողների բոլոր խըմբերի և հերթերի լրիվ և համահավասար սպասարկումը:*

2. *Համաձայն 1-ին հոդվածի, վոչ ուշ քան 1929 թ. 1-ն դեկտեմբերի իրենց աշխատանքների վերակազմակերպումն պետք է կատարեն՝*

*ա) Արդյունաբերական, առևտրական և տրանսպորտի ձեռնարկությունների ղեկավար մարմինները:*

*բ) Տրանսպորտի ձեռնարկությունները (յերկաթուղային, ջրային, ավտոմոբիլային, բեռնավորման-բեռնաթափման և այլն) և պահեստները:*

*գ) Քաղաքներում և քաղաքատիպ վայրերում դասավորված առևտրական ձեռնարկությունները՝ (խանութներ, կրպակներ, վրաններ) կոշիկի, հագուստեղենի և այլն վերանորոգման արհեստանոցները, բժշկական և սանիտարական հիմնարկությունները (բուժարաններ, հիվանդանոցներ, կլինիկաների բուժարանային բաժիններ, բժ. հանձնաժողովներ, դեղատներ, վարսավիրանոցներ, բաղնիքներ, լվացքատներ և այլն): Նախադպրոցական հիմնարկությունների (մսուրներ, մանկական հրապարակներ և այլն): Որացուցային պարբերական մամուլի մարմինները, հասարակական սննդի ձեռնարկությունները (ճաշարաններ, բուֆետներ և այլն): Փոստ-հեռագրական հիմնարկությունները, խնայողական դրամարկղները, լոմբարդները, աշխատանքի մարմինները (Աշխատանքի բորսաներ, ապահովագրական դանձարկղներ, աշխատանքի տեսչություններ և այլն):*

*Կուլտ-կրթական ձեռնարկությունները և հիմնարկությունները (թատրոններ, կրկեսներ, կինո, ակումբներ, գրադարաններ, կարմիր-անկյուններ, թանգարաններ, ֆիզկուլտ-հրապարակներ, մարզադաշտեր, այգիներ, ցու-*

ցահանդակներ և այլն)։ Անընդհատ ուսումնական պրակտիկային անցած բարձրագույն ուսումնական հաստատությունները և տեխնիկումները, ինչպես նաև բանվորական ֆակուլտետները, դասընթացները և այլն։ Կոմմունալ տնտեսության մարմինները մասնավորապես բնակարանային, իրավաբանական ոգնության մարմինները։

3. Առաջարկվում է ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարիատներին, Միութենական հանրապետությունների կառավարություններին և ԽՍՀ Միության ու Միութենական կառավարությունների Կոոպերատիվ կենտրոններին շտապ կարգով տալ կոնկրետ ցուցմունքներ 2-րդ հոդվածում նախատեսված, իրենց ենթակա մարմիններին, իրենց աշխատանքների վերակազմակերպման անհրաժեշտ ձեռնարկումների մասին, ինչպես նաև խիստ հսկողություն սահմանել այդ ցուցմունքների կատարման վրա։

4. Արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավար մարմինները պարտավոր են վաղորոք հայտնել բոլոր սպասարկվող ձեռնարկություններին և հիմնարկություններին (հոդ. 2-րդ) արդյունաբերական ձեռնարկություններն անընդհատ արտադրական շաբաթի փոխանցման ժամկետների մասին։

5. 1-ին հոդվածի համաձայն հիմնարկությունների աշխատանքների վերակազմակերպումն պետք է կատարվի առանց հաստիքի ավելացման։

6. Առաջարկվում է ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարիատներին և միութենական հանրապետությունների կառավարություններին, համաձայն հոդ. 1-ի հատուկ քննության առնել, 2-րդ հոդ. չմատնանշած մյուս ձեռնարկությունների և հիմնարկությունների աշխատանքների վերակազմակերպման հարցը և 2 ամսյա ընթացքում իրենց առաջարկությունները մտցնեն ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը։

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
նախագահ՝ Ա. Ի. ՌԻԿՈՎ

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
և Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի գործերի
կառավարչի տեղակալ՝ Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ

Մոսկվա—Կրեմլ
24 սեպտեմբերի 29 թ. 1811

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐԻ ԱՆԸՆԴՀԱՏ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

### *ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՎՈՐՈՇՈՒՄ Ե՛*

*1. ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարիատների փոխանցումը, անընդհատ արտադրական շաբաթի, կարող ե տեղի ունենալ միայն կառավարական հանձնաժողովի թույլտվությամբ։*

*2. Միութենական հանրապետությունների, ժողովրդական կոմիսարիատների փոխանցումն անընդհատ արտադրական կյանքի, կատարվում ե միութենական հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի թույլտվությամբ։*

*ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի*

*նախագահ՝ Ա. Ի. ՌԻԿՈՎ*

*ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի*
*և Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի գործերի*
*կառավարչի տեղակալ՝ Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ*

*Մոսկվա—Կրեմլ*

*24 սեպտեմբերի 29 թ.:*

---

## ԱՆԸՆԴՀԱՏ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԻ ԱՆՑՆՈՂ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

### Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ՝

*Ի լրումն ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1929 թ. 24 սեպտեմբերի վորոշման անընդհատ արտադրական շաբաթի անցնող ձեռնարկությունների և հիմնարկությունների, բանվորական ժամանակի և աշխատանքի ժամանակի մասին ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է՝*

*1. Անընդհատ արտադրական շաբաթի անցած հիմնարկություններում, աշխատակիցների փոխարինումը մյուս աշխատողների կողմից (ինչպես հավասար, նույնպես և ցածր վարձատրություն ստացողների) կատարվում է առանց փոխհատուցման համար վճարվելիք վորևիցե լրացուցիչ վարձատրության:*

*2. 6-ժամյա աշխատանքային որ ունեցող հիմնարկությունների անընդհատ արտադրական շաբաթի փոխանցման դեպքում, բանվորական ժամանակի տևողությունը աշխատողների հետևյալ կատեգորիաների համար մնում է անփոփոխ:*

*ա) 8-ժամյա բանվորական որ ունեցող աշխատակիցները:*

*բ) Անչափահասները.*

*գ) Աշխատակիցներ, վորոնց աշխատանքի ժամանակը, նկատի ունենալով նրա առանձնակի վնասակարությունը, կամ իրենց աշխատանքի այլ առանձնահատկությունները,, սահմանված է կրճատված բանվորական որը:*

*3. 6-ժամյա բանվորական որ ունեցող հիմնարկությունների փոխանցումը, անընդհատ արտադրական շաբաթի կատարվում է առանց գոյություն ունեցող վարձատրության չափի և ձևերի փոփոխման, ինչպես նաև առանց աշխատակիցներին լրացուցիչ որեր տրամադրելու:*

*ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի*

*նախագահ՝ Ա. Ի. ՌԻԿՈՎ*

*ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների և Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի գործերի կառավարիչ՝ Ն. ԳՈՐԲՈՒՆՈՎ*

*Մոսկվա—Կրեմլ*

*4 հոկտեմբերի 29 թ.*

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

## ԱՆԸՆԴՀԱՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԿԽ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ԸՆԴՈՒՆԱԾ ՎՈՐՈՇՈՒՄԸ

*Խորհրդային Միության բանվոր դասակարգի առաջ ծառացած է խոշոր և բարդ խնդիր՝ ժողովրդական տնտեսությունը կազմակերպել այնպես, վորպեսզի մեր ունեցած սեփական միջոցներով չկապելով և հաշվի չառնելով, կապիտալիստական պետություններից ստացված փոխառությունները ստանալ բացարձակապես խոշոր արդյունքներ: Տնտեսության պլանային ղեկավարությունը հնարավոր դարձնելով, գոյություն ունեցած կահավորումն ավելի կազմակերպված ու լավ ոգտագործելը, այս ասպարեզում խոշոր հնարավորություններ է տալիս:*

*Հիշյալ հնարավորություններից մեկն էլ ձեռնարկությունների դադարի վերացումն է աշխատավորության հանգստի որերին տվյալ ձեռնարկությունում անընդհատ արտադրական շաբաթ կիրառելու միջոցով—առանց արտադրության մեջ զբաղված բանվորների ընդհանուր բանվորական ժամերի ավելացման:*

*Անընդհատ շաբաթն արագացնելով կապիտալ շինարարության տեմպը, տրանսպորտի աշխատանքները, ավելացնելով արդյունաբերության արտադրանքը և վողջ յերկրի առևտրա—արդյունաբերական շրջանառությունը խոշոր քայլ պետք է հանդիսանա, յերկրի ինդուստրացման տեմպի ուժեղացման և բանվորության տնտեսական ու կուլտուրական կյանքի բարելավման գործում:*

*ՀԱՄԿԽ—ի նախագահությունը չնսեմացնելով անընդհատ արտադրական շաբաթի կենսագործման հետ կապված դժվարությունները, ընդգծում է, վոր նրա կիրառման դեմ ուղղված բոլոր առարկությունները խուճապայնություն է և արդյունք այն հանգամանքի, վոր առարկողները հաշվի չեն առնում Խորհրդային Միության բանվոր դասակարգի քաղաքական գիտակցության աստիճանը: Արտադրության նկատմամբ նրա մեջ առաջացած խոշոր վերելքը, վորը յուր արտահայտությունն է գտել, սոցիալիստական մրցման ծավալման գործում:*

*ՀԱՄԿԽ—ի նախագահությունը հաստատում է Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության մեջ անընդհատ արտադրական շաբաթ կիրառելու լրիվ անհրաժեշտության մասին իր 1929 թ. ապրիլի 21—ի կայացրած վորոշումը, ամբողջովին հավանությունն է տալիս ԽՍՀՄ ժողկոմխորհի 26 ոգոստոսի վորոշմանը և առաջարկում է բոլոր պրոֆկազմակերպություններին՝ ամենայեռանդուն մասնակցությունն ունենալ անընդհատ արտադրական շաբաթի վերամշակման խնդիրներում, այդ խնդիրները ամենալայն քննության հանձնել բանվորների ընդհանուր ժողովներին, արտադրական կոնֆերենսիաներին, պլենումներին և համագումարներին: Անդադար և ամեն կերպ բարձրացնելով*

բանվորական մասսաների ձեռներեցությունը, ղեկավարել այդպիսին, դիմավորել այդ շարժումը հոգատար արտադրական անընդհատ շաբաթի կիրառման, հետևապես և ամեն կերպ խրախուսել անընդհատ արտադրական շաբաթին անցնելու վերաբերյալ, իրենց բանվորական մասսաներից բխող ձեռներեցությունը:

Մասսաներում այս խնդիրը ավելի խորացած կերպով մշակելու համար նախագահությունն առաջարկում է, արտադրական խորհրդակցություններին օգնելու նպատակով կազմել ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներ:

Պրոֆկազմակերպությունները բանվորական մասսաներին պետք է բացատրեն, վոր անընդհատ արտադրական շաբաթի կենսագործումը, շնորհիվ արտադրանքի ավելացման, ինքնարժեքի իջեցման, նպաստելու յե բանվորների ռեալ աշխատավարձի բարձրացմանը:

Հանգստի օրերի կարգավորումը, բանվորական շաբաթի տևողության կրճատումը, հանգստի օրերի ավելի հաճախակի լինելը, վորոնց պայմաններում տարեկան արձակուրդի յերկարացման հնարավորությունները, վերոհիշյալ խնդիրների հետ միասին, ստեղծվում են մի շարք պայմաններ, վորոնք անշուշտ նպաստելու յեն աշխատանքի արտադրողականության, ապա ուրեմն և աշխատավարձի բարձրացմանը: Վերջինիս վրա մասնավորապես ազդում է այն հանգամանքը, վոր կրճատված բանվորական շաբաթից, ընկնում է ավելի ցածր արտադրողականություն ունեցող և դժբախտ պատահարների ավելի խոշոր դեպքեր տվող վերջին օրերը (7-րդ կամ նույն իսկ 6-րդ օրը):

Հանգստյան օրերի օգտագործման կանոնավորումը և նրանց ավելի հաճախակի լինելը, բարձրացնում են վոչ միայն աշխատանքի արտադրողությունը, այլև աշխատանքի անվտանգելիությունը: Բանվորների կյանքի և առողջության պահպանման տեսակետից, այս վերջին հանգամանքը, ունի խոշոր և կարևոր նշանակություն: Անընդհատ արտադրական շաբաթի կենսագործումը կրճատելու յե բանվորների առողջության համար վնասակար և ձեռնարկության արտադրանքը թանգացնող արտաժամյա աշխատանքների քանակը:

Անընդհատ արտադրական շաբաթի անցումով, ձեռնարկության աշխատավորների շարքերն են ներգրավվելու բանվորների նոր կադրեր, այդպիսով մեղմանալու յե գործազրկությունը և միաժամանակ հնարավորություն է ստեղծվելու արտադրության մեջ ներգրավվելու, բանվորների ընտանիքի գործազուրկ անդամների խոշոր մասին:

Բանվորական լայն մասսաների և ճարտարագետ—տեխնիկների հետ տվյալ խնդիրը գործնականում վերամշակելու ժամանակ, պրոֆկազմակերպությունները պետք է ղեկավարվեն հետևյալով:

1. Ձեռնարկության փոխանցումը, անընդհատ արտադրական շաբաթին, պետք է կատարվի միայն այն դեպքում, յերբ տվյալ խնդիրը մանրամասն մշակված է, բանվորական ամենալայն մասսաներում քննության է առնված և յեթե նրա փոխանցումը համաձայնեցված է տվյալ ձեռնարկության աշխատանքի հետ կապ ունեցող մյուս ձեռնարկությունների (շրջանների կամ արդյունաբերության ճյուղերի) փոխանցման հետ: Անընդհատ արտադրական շաբաթի փոխանցումը փաստացիորեն կատարվում է այդ պլանը կառավարական հանձնաժողովի կողմից հաստատելուց հետո:

Անընդհատ արտադրական շաբաթի պրոբլեմը, պրոֆեսիոնալ կազմակերպություններում պետք է քննության առնվի իր ամբողջ ծավալով, (հում նյութ, վառելիք, բեռնավորում, ընթացիկ և հիմնական վերանորոգման կազմակերպումը և այլն) վորի ընթացքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել աշխատանքի խնդիրներին:

Ձեռնարկությունների անընդհատ արտադրական շաբաթի փոխանցելու հետ միասին, պետք է լավացվի տնտեսավարական մարմինների ղեկավարությունը, ամրացվի աշխատանքային դիսցիպլինան և ընդհանրապես լավացվի արտադրության հիմնական ցուցանիշները, (ինքնարժեքի իջեցում և այլն):

Ժողովրդական Կոմիսարների և կառավարական ապարատների փոխանցումն անընդհատ արտադրական շաբաթի պետք է կատարվի առանց հաստիքային միավորների ավելացման:

Անընդհատ արտադրության խնդրի մշակման ժամանակ, պետք է փնտրել այնպիսի ուղիներ, վորով հնարավոր է, սեզոնային աշխատանքները փոխանցել մշտականի, գործիքների և կահույքի վերանորոգման համար ամառվա ամիսների ընթացքում կամ ամսե ամիս, ձեռնարկության կողմից գործադրվող դադարը վերացնելու, կամ այդպիսիների տևողությունը առավելագույնս չափով կրճատելու, այսինքն անհրաժեշտ է ձգտել, տվյալ ձեռնարկություններում սահմանել անընդհատ արտադրական տարի:

2. Անընդհատ արտադրական շաբաթի տևողությունը քննության առնելիս, հնարավոր է ընդունել 2 վարյանտներ՝ 6-օրյա և 5-օրյա անընդհատ արտադրական շաբաթ ընդ վորում յուրաքանչյուր առանձին դեպքում հաշվի առնել, տեղական արտադրական և մյուս բոլոր պայմանները, ինչպես օրինակ՝ արտադրության բնույթը, հերթերի քանակը, բանվորական օրվա տևողությունը, պահեստի ագրեգատներ ունենալը, ընթացիկ և հիմնական վերանորոգման պահանջը, բանվորների բնակարանների տարածության հեռավորությունը և այլն և այլն: Սակայն արտադրական շաբաթի յուրաքանչյուր սիստեմում, ամեն մի բանվորի օրվա աշխատանքային ժամերի ընդհանուր թիվը չպետք է գերազանցի առանձին բանվորների տարեկան պարտադիր ժամերի քանակը, ինչպես նաև չպետք է գերազանցի Աշխ. Օրենսգրքով սահմանած տարեկան պարտադիր աշխատանքային ժամերի քանակը: Հատուկ ուշադրությամբ պետք է քննության առնել բանվորի կիրակի և տոն օրերի նախօրյակի արտոնյալ 2 ժամյա փոխհատուցման ձև սահմանելու խնդիրը (ավելի հաճախ հանգստի օր տրամադրելը, արձակուրդի երկարացումը):

Այն ձեռնարկություններում, վորտեղ սահմանված է 7-ժամյա բանվորական օր արտադրական շաբաթի վորևիցե վարյանտը ընդունելիս պետք է խուսափել այն վարյանտից, վորի կիրառումը կապված է տվյալ ձեռնարկությունները 8-ժամյա աշխատանքային օրվա փոխանցելու հետ:

Արտադրական շաբաթի այս կամ այն վարյանտն ընդունելիս պետք է աչքի առաջ ունենալ մեքենաների մաքրման, կամ նրանց ընթացիկ և հիմնական վերանորոգումների համար հնարավորություններ տալը:

Պրոֆկազմակերպությունների աշխատանքները թեթևացնելու և այս բարդ խնդրի մշակման գործին օժանդակելու համար, նախագահությունն առաջարկում է ՀԱՄԿԽ-ի Տարիֆ-տնտեսական և Հրատարակչական բաժիններին ըն-

տապ կարգով պատրաստել և հրատարակել անընդհատ շաբաթի տարբեր ձևերի և բոլոր անհրաժեշտ հաշիվների փոքրիկ ձեռնարկ:

Անընդհատ արտադրության փոխանցումով առաջանալու յե բանվորական նոր ուժի և տեխնիկական պերսոնալի պահանջ: Այդ իսկ պատճառով արհմիությունները տնտեսական մարմինների հետ միասին անմիջապես պետք է անցնեն անընդհատ արտադրության անցնող ձեռնարկությունների իսկական պահանջի հաշվառմանը: Ելնելով տվյալ արտադրության պայմաններից, մանրամասնորեն պետք է հաշվի առնել նոր պահանջվելիք վորակյալ բանվորական ուժը և տեխնիկական պերսոնալը: Այդ պահանջը ծածկելու համար պետք է ոգտագործվեն հետեվյալ ուղիները՝

ա) Անվորակ և կիսավորակ բանվորների մասսայական առաջքաշումը (ըստ իրենց աշխատանքի), ավելի բարձր վորակի աշխատանքների համար այն հաշվով, վորպեսզի դրսից վարձվող բանվորները գլխավորապես լինեն անվորակ և կիսավորակ աշխատանքի համար:

բ) Ամենակարճ ժամանակաընթացքում և շտապ կարգով վերավորակավորել այդ կարգով առաջ քաշած բանվորներին: Ձեռնարկություններում տարբեր տեսակի կարճատև դասընթացքների և խմբակների ցանցի ծավալումով, այդ աշխատանքներին ներգրավվելով և ոգտագործելով ֆաբզործուսները, մասնայական արհեստների դպրոցները, աշխատանքի բորսաներում և աշխատանքի Կենտրոնական Ինստիտուտի (ՑԻՏ) կազմակերպած ցեխը և այլն:

գ) Բանվորական նոր ուժ վարձելիս նպատակ ունենալով մեղմացնել բընակարանային ճգնաժամը, պետք է վարձել առաջին հերթին ինչպես քաղաքում գտնվող գործազուրկներից, նույնպես և բանվորի ընտանիքի գործազուրկ անդամներից, ձեռնարկելով անհրաժեշտ միջոցները, նրանց յեվս ամենակարճ ժամանակաշրջանում տալու հարկավոր և անհրաժեշտ վորակավորում:

Հանձնարարել կուլտ–բաժնին մշակել արտադրության մեջ նախապատրաստական դասընթացքների կազմակերպման խնդիրը, և տալ տեղերին համապատասխան ցուցմունքներ:

դ) Միջին և բարձր տեխնիքական պերսոնալի պահանջը ծածկելու համար ծավալել կարճատև դասընթացքների ցանցը, և նրանց միջոցով վորակյալ բանվոր վարպետներից, տասնապետներից և այլն ինչպես և վերջին հերթի ու հերթապահության ճարտարապետներից և տեխնիքներից, վերապատրաստել պահանջվող անհրաժեշտ ուժերը: Այդ նպատակով արտադրության տեխնիքական աշխատանքի առաջքաշման յենթակա առանձին վորակյալ բանվորներին ամրացնել (կցել) ձեռնարկության այս կամ այն ճարտարապետին:

յե) Իրենց մասնագիտությամբ չ՚աշխատող բոլոր ճարտարապետներին և տեխնիքներին փոխադրել արտադրության մեջ, փոխադրել նույնպես տարբեր տնտեսական հաստատությունների ապարատներում աշխատող ինժեներներին և տեխնիքներին, ամենամաքսիմալ և հնարավոր չափով:

զ) Վճռականորեն կենսագործել բոլոր այն ձեռնարկումները, վորոնք ուղղված են բարձրագույն տեխնիքական դպրոցական հաստատություններից և տեխնիկումներից, շրջանավարտ ճարտարապետների և տեխնիքների արագ ավարտմանը: Բարձրագույն տեխնիքական հաստատությունների առաջ խընդիր հարուցել վերջին կուրսերի ուսանողներից, առանձնապես պետական քըննության պատրաստվողների առավելագույն մասին, ըստ հնարավորին ամ–

բացնել ձեռնարկություններին, արտադրական պրակտիկ աշխատանքներ կատարելու համար:

Ամենալուրջ ուշադրություն պետք է դարձնել, աշխատանքի պաշտպանության խնդիրներին. այն ձեռնարկություններում, վորոնց փոխանցումը անընդհատ արտադրական շաբաթի կարող է առաջ բերել աշխատանքի պայմանների վատթարացում, կամ թե վտանգավորության ուժեղացում: Անհրաժեշտ է նախատեսնել բանվորներին պաշտպանող լրացուցիչ հատուկ ձեռնարկումներ, անհրաժեշտ է նաև բանվորների նոր կադրերի հետ, աշխատանքի անվտանգելիության տեխնիկայի մասին տանել լայն բացատրական աշխատանքներ:

Անընդհատ շաբաթը հաջող կենսագործելու համար, պրոֆկազմակերպությունները մանրամասնորեն պետք է մշակեն, բանվորների կենցաղի սպասարկման խնդիրները, և համաձայնեցնեն տնտեսական մարմնի, կոոպերատիվ ցանցի, և փոխադրական մարմինների, վերջիններիս հաստատությունների վողջ աշխատանքները հարմարեցնելու արտադրության և բանվորների պահանջներին: Միաժամանակ պետք է համաձայնեցնել, սպասարկվող կազմակերպությունների հետ իրենց հաստատությունները անընդհատ կյանքի փոխանցելու հարցը, թեպետ և բոլորի փոխանցումը կատարել միաժամանակ, բայց յերբեք թույլ չտալ, վորյեվիցե հաստատության ուշ փոխանցումը, վորը կարող է վնաս հասցնել արտադրությանը, կամ վատացնել բանվորական մասսաներին սպասարկելու գործը:

Նույնպես և միատեղ անհրաժեշտ է մշակել, բանվորական նոր կադրերին բնակարանով ապահովելու խնդիրները, թույլ չտալ բանվորական ներկա կադրերի բնակարանային պայմանների վատթարացնելը:

Անընդհատ արտադրական շաբաթի կենսագործումը, բանվորների կենցաղի մեջ անխուսափելիորեն բեկում է մտցնելու: Տվյալ խնդիրների մշակումը, ինչպես բացատրական աշխատանքների, նույնպես և փոխանցման հետեվանքով առաջացող վորոշ դժգոհությունները կանխելու գործում, հատուկ տեղ պետք է գրավի մասնավորապես անհրաժեշտ է առավելագույն չափով հարգել մի բանվորի ընտանիքի անդամների դիմումը, իրենց միասնական հանգստի օր ունեցող, բրիգադայի կամ սմենայի մեջ մտցնելու մասին:

## ՄԱՍՍԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

1) Անցնելով անընդհատ շաբաթի, արհեստակցական կազմակերպություններից պահանջվում է այնպես կազմակերպել աշխատանքները, վորպեսզի փոխանցման կենսագործման շուրջը կենտրոնացվի մասսայի ակտիվությունը, նրանց մասնակից դարձնել փոխանցման գործին և ապահովել համապատասխան ձեռնարկությունների բանվորների կուլտ-կենցաղային շահերը: Դրա համեմատ պետք է հարմարեցնել պրոֆմիությունների մասսայական աշխատանքների բոլոր ձևերը: Միութենական աշխատանքների համապատասխան ձևեր մշակելու համար, բոլոր պրոֆկազմակերպությունների,—վերից մինչև վար,— կարեվորագույն խնդիր համարելով, ձեռնարկություններն անընդհատ արտադրության փոխացելու պրոցեսների մանրամասն ուսումնասիրությունը, ՀԱՄԿԽ-ը այժմ իսկ անհրաժեշտ է համարում, առաջադրել պրոֆմիությունների ուշադրությունը մի քանի հիմնական խնդիրներ:

2) Անընդհատ արտադրական շաբաթի փոխանցող բոլոր ձեռնարկու-

թյուններում, պետք է ապահովվի գործարկոմ-տեղկոմների ցեխ-բյուրոների և արհ-լիազորությունների անընդհատ աշխատանքը։ (Այդ կազմակերպություններում հանդստի տոն և կիրակի օրերն աշխատանքներ կատարելու իմաստով)։ Առանձին ձեռնարկությունները անընդհատ արտադրական շաբաթին փոխանցելը, պահանջում է նույնպես անպայմանորեն փոխանցել, տվյալ վայրում գտնվող համապատասխան միութենական կազմակերպությունների բաժինները և բաժանմունքները։ Անկախ տվյալ վայրում ձեռնարկություններն անընդհատ շաբաթի փոխանցվելու հանգամանքից, նպատակ ունենալով կազմակերպել բանվորների և ծառայողների մշտական և անընդհատ սպասարկումը, ՀԱՄԿԽ-ը միութենական կազմակերպություններին քննության է հանձնում, բոլոր պրոֆկազմակերպությունների աշխատանքները, անընդհատ շաբաթի փոխանցելու խնդիրները։

3) Անընդհատ արտադրական շաբաթի փոխանցումը պահանջում է, ավելի ուժեղ ուշադրություն դարձնել, բանվորների այն հերթերի սպասարկմանը, վորոնք մեկ որ աշխատանքի յեն դուրս գալիս, իսկ մյուս օրը հանգստանում։ Անհրաժեշտ է մանրամասնորեն հաշվի առնել, տվյալ հերթերի արտադրական պայմաններն ու արտադրության շահերը և ձգտել, վորպեսզի այդ խնդիրները արտացոլվեն ինչպես միութենական ամենօրյա աշխատանքներում, նույնպես և միութենական մարմինների՝ գործարկոմ-տեղկոմների, ցեխ-բյուրոների և գործարկոմ-տեղկոմների հիմնական հանձնաժողովների ընտրության և կազմակերպման ժամանակ։ Անընդհատ արտադրական շաբաթի- անցած ձեռնարկություններում, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել, ժողովները ըստ հերթերի գումարելու, վորտեղ և պետք է քննության առնել վոչ միայն տվյալ հերթին վերաբերվող խնդիրները, այլ և խնդիրներ, վորոնք վերաբերվում են ամբողջ ձեռնարկությանը, ինչպես նաև քաղաքական ու տընտեսական կյանքին։ Դրան զուգընթաց, վողջ գործարանի հասունացած խընդիրների լուծման համար, անհրաժեշտ է պարբերաբար գումարել նաև համագործարանային ընդհանուր ժողովներ և կոնֆերանսներ։

4) Անընդհատ արտադրական շաբաթի փոխանցման կենսագործումը, առաջադրում է արտադրությունում զբաղված բանվորների թվի ավելացում։ Պրոֆկազմակերպություններն իրենց ուշադրությունը դարձնելով լրացուցիչ բանվորական ուժ հրավիրելու առաջին հերթին, միության գործազուրկ անդամներից, միաժամանակ պետք է հատուկ ուշադրություն դարձնեն, արտադրության մեջ ներգրավված բանվորական նոր կադրերի, քաղաքական դաստիարակության գործին, նրանց ձեռնարկության արտադրական կյանքի ներգրավելու, կուլտ-կենցաղային կարիքների բավարարման և նրանց շարքերից ակտիվի նոր խավերի աճեցման խնդրին։

5) Միութենական կազմակերպությունների անընդհատ աշխատանքի կազմակերպումը չ'պետք է կատարվի ի հաշիվ նրանց հաստիքի ավելացման։ Միութենական աշխատանքների բեռնավորման ուժեղացումը պետք է փոխհատուցվի միութենական մասսայլին սպասարկելու գործնական աշխատանքներում, միության ակտիվին ամենալայն չափերով ներգրավելու միջոցով։ Դեռ ավելին, միութենական աշխատանքներում ավելի լայն չափերով պետք է ծավալել կամավոր աշխատանքի սկզբունքը, վորի միջոցով և միութենական մասսայական կազմակերպություններից պետք է դեն վանել և մինիմումի հասցնել վարձու ապարատը։ Այդպիսով պրոֆկազմակերպությունների առաջ

դրված է մի հիմնական խնդիր՝ վճռականորեն ուժեղացնել ակտիվի ներգրավումը և գաղափարականությունը միութենական գործնական աշխատանքներին արագացնելով ակտիվի պատրաստման գործի կազմակերպումն:

6) Անընդհատ արտադրական շաբաթի պայմաններին, իր գործունեությանը հարմարեցման բոլոր աշխատանքները, ամբողջապես պետք է վարի գործարկոմ–տեղկոմն ամբողջովին իրեն պատասխանատվությամբ չառանձնացնելով այդ աշխատանքների համար հատուկ հանձնաժողովներ (շտաբներ) և այլն: Դրա հետ միասին գործարկոմն ակտիվխմբերին կամ ակտիվխմբերի խմբակին կարող է տալ առանձին հանձնարարություններ, միայն այս կամ այն խնդրի մշակման համար:

## ԿՈՒԼՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7) Անընդհատ արտադրության անցումը (կիրակիների և տոների վերացումը բանվորների զանազան խմբակցությունների տարբեր հանգստի օրերը, հերթափոխ աշխատանքի ծավալումը և այլն) անխուսափելիորեն արմատապես փշրման է ենթարկելու, բանվորի կենցաղի հին կենցաղային սովորությունները:

Աշխատանքի նոր պայմանները միաժամանակ հսկայական հեռանկարներ են ստեղծում, ավելի լայն չափով ընդգրկելու բոլորին քաղլուսավորական աշխատանքներում, ավելի խորացնելու, լայնացնելու արտադրական լուսավորությունը և ավելի հաջողությամբ պայքարելու կրոնի և հին կենցաղի մնացորդների դեմ:

Արհմիությունների կուլտ–աշխատանքների անելիքը, պետք է կայանա նրանում, վորպեսզի ամբողջովին հաշվի առնվեն, այդ նոր հեռանկարները և բոլոր կուլտ–հիմնարկների աշխատանքները վերակառուցել այնպես (ակումբներ, կարմիր–անկյուններ, գրադարաններ, ստադիոններ և այլն), վորպեսզի ապահովված լինի մասսաներին ավելի լայն չափով կուլտ–աշխատանքներում ներգրավելու հանգամանքը: Արհմիությունների կուլտ-աշխատանքների առաջնահերթ խնդիրը պետք է կայանա լայն բացատրական կամպանիա մղել, բանվորական մասսաներում անընդհատ արտադրողականության նշանակության մասին, սոցիալիստական շինարարության մեջ և կուլտուրական հեղափոխության իրականացման գործում: Արհմիությունների կուլտ–հիմնարկների աշխատանքների հարմարեցումն անընդհատ արտադրությանը՝ պետք է նախագծի հետևյալ կերպ:

ա) Անընդհատ աշխատանքի պետք է փոխադրվեն բոլոր ակումբները, գրադարանները և կարմիր-անկյունները. այդ հիմնարկների աշխատանքներում պետք է ինկատի առնվի, վոր նախորդ միասնական հանգստի օրերի փոխարեն, բանվորների խոշոր մասը հանգստանալու յե ամեն օր: Այդ կապակցությամբ ինչպես և հերթափոխ աշխատանքների լայն ծավալման հետ կապված ակումբների, գրադարանների և կուլտ–հիմնարկների աշխատանքները, պետք է տանել յերկու հերթի, փոխանակ գոյություն ունեցող այժմյան կանոնի, յերբ կուլտ–հիմնարկները «հարվածային» կարգով աշխատում են միայն շաբաթ ու կիրակի օրերին, նրանց աշխատանքը պետք է համաչափ կերպով բաշխված լինի շաբաթվա բոլոր օրերին յելնելով հանգստացող խմբերի և ազատ հերթերի սպասարկման անհրաժեշտությունից:

բ) Այն ձեռնարկները, վորոնք անցնում են անընդհատ արտադրության,

անհրաժեշտ է մանրակրկիտ կերպով մշակել մասսայական կուլտ—լուսավորական աշխատանքների որացուցային ծրագիրը, վորը պետք է կապակցված լինի ձեռնարկության մեջ հասարակական կազմակերպությունների և մասսայական կազմակերպչական ծրագրերի հետ։ Ինչպես ակումբների, կարմիր-անկյուն-ների նույնպես և կուլտուրական այլ հիմնարկների որացուցային ծրագրերը, պետք է ըղխեն 5 կամ 6 որվա շաբաթվա հաշվից, յելնելով իհարկե այն սիս-տեմից, վորը կընդունվի տվյալ արտադրության համար։

գ) Առանձին մանրամասնությամբ պետք է մշակել արտադրական գասըն-թացքների անդրադիտության լիկվիդացիայի և հանրագիտական այդ ձեռ-նարկումների աշխատանքների կազմակերպման հարցը, բանվորների զանազան խմբերին և հերթերին սպասարկելու համար, սակայն այնպես, վորպեսզի խմբակների ունկընդիրների և ուսանողների աշխատանքները վոչ թե թուլանա, այլ ըղհակառակը հնարավոր պայմաններ ստեղծվեն, դասընթացքների և խմբակների միջոցով, ավելի մեծ թվով ուսանողներ ընդգրկելու համար։

դ) Ակումբների և կուլտուրական այլ հիմնարկների որացուցային ծրա-գրերը բաշխելիս, պետք է հաշվի առնել կուլտ—հիմնարկների աշխատանքնե-րը բանվորների յերեխաների մեջ ավելի զարգացնելու անհրաժեշտությունը։

յե) Անընդհատ արտադրության անցնելու կապակցությամբ ամբողջապես պետք է վերակառուցել կազարմաններում և բանվորական հանրակացարաննե-րում տարվելիք կուլտ—աշխատանքները, քանի վոր ամեն որ այնտեղ լինելու յե մեծ թվով հանգստացող բանվորներ և բանվորուհիներ։

Այդ հանգամանքը հնարավորություն կստեղծի ավելի խորացնելու և լայ-նացնելու աշխատանքները կազարմաններում և հանրակացարաններում, ավելի հաջող կերպով սպասարկելու բանվորների կուլտուրական և կենցաղային պա-հանջները (ինքնազարգացման խմբակների կազմակերպումը, շրջակայու-թյուններ, կոլեկտիվորեն թատրոն և կինո հաճախելը, մանկական հրապա-րակների կազմակերպումը և այլն)։

զ) Պետք է ել ավելի ծավալել արհմիությունների շեֆական աշխատանք-ները գյուղում։ Ամենորյա հանգստի որեր ունենալով, հնարավորություն է ստեղծվում ավելի կանոնավոր կերպով սպասարկելու յենթաշեֆ գյուղերին, ավելի հաճախակի բանբրիգադաների գյուղ գործուղղելու և աշխատելու գյու-ղական խրճիթ-ընթերցարաններում և կարմիր անկյուններում։

Այս նոր մոթողները և արհմիութենական կուլտ—հիմնարկների աշխա-տանքների խոշոր թափը կկիրառգործվի կուլտ—ակտիվի քանակն ավելացնելու դեպքում։ Անհրաժեշտ է այդ ակտիվի կազմի ավելացման հարցը լուծել առա-ջին հերթին կամավոր սկզբունքի լայնացման միջոցով, ավելի ակտիվ և պատ-րաստված արհմիության անդամ՝ բանվորների թվից հաշվի առնելով այն իսկ մեծ հնարավորությունները, վորոնք ըղխում են ամենորյա հանգստից։ Ակտիվին այս յեղանակով աշխատանքի կոչելու դեպքում, պետք է խուսափել կուլտ—հիմնարկներում ադմինիստրատիվ-տեխնիկական վարձու պերսոնալի ավելացումից, այդ միջոցին դիմել միայն բացառիկ դեպքերում։

Կուլտ—աշխատանքների այս նոր հեռանկարները, կուլտ—հիմնարկներին շաբաթվա բոլոր որերին յերկու հերթով բեռնավորելու հանգամանքը անհրա-ժեշտ է դարձնում նրանց ֆինանսավորումն արհկազմակերպությունների կողմից։ Բոլոր պրոֆկազմակերպությունները պետք է անմիջապես վերանա—

յին իրենց նախահաշիվները և ավելացնեն միջմիութենական միջոցների մասնահանումը կուլտ-աշխատանքների համար։

Միաժամանակ անհրաժեշտ է, վորպեսզի բոլոր արհկազմակերպությունները, Լուսժողկոմատի և համապատասխան խորհրդային-հասարակական այլ կազմակերպությունները մեկտեղ պետք է լուծեն տվյալ շրջանի զանազան կուլտ-հիմնարկների աշխատանքն անընդհատ արտադրության անցած ձեռնարկների աշխատանքների համապատասխանեցնելու հարցը։ (Թատրոնների, քաղաքային գրադարանների, գիշերային դասընթացքների, յերեկոյան և կիրակնորյա համալսարանների և այլ աշխատանքը)։

8․ ՀԱՄԿԽ-ի նախագահությունը ՃՏԲ-ի և բոլոր ճարտարապետական կազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում այն բացառիկ դերի վրա, վոր կարող են և պետք է խաղան նրանք անընդհատ արտադրության անցնելու հարցերի մշակման գործում, այլև այն հսկայական ոգնությանը, վորպիսին նրանք կարող են հասցնել արհկազմակերպություններին և բանվորական լայն մասսաներին այդ հարցի քննության գործում։

Նախագահությունն առաջարկում է ՃՏՄԲ-ին հատուկ դիրեկտիվ տալ բոլոր ՃՏՍ-ներին, նրանց աշխատանքներն այս ասպարեզում ուժեղացնելու համար։

9․ Նախագահությունն առաջարկում է «Տրուդ» թերթին և «Արտադրական ժուրնալ»-ին ուժեղացնել անընդհատ արտադրության անցկացման և այդ հարցի մշակման խնդիրների լուսաբանումը։

10․ Նախագահությունն առաջարկում է ՀԱՄԿԽ-ի տարիֆ-տնտեսական բաժնին ԽՍՀՄ Աշխժողկոմատի հետ միասին մի շաբաթվա ընթացքում պատրաստել ժողկոմխորհի վորոշման նախագիծն աշխատանքի հարցերի վերաբերյալ, վորոնք կբխեն ներկա վորոշումից, յելնելով նրանից, վոր առաջիկա ժամանակաշրջանը (կես և 1 տարի) պետք է համարել, վորպես լայն փորձի կուտակման ժամանակաշրջան անընդհատ արտադրության շաբաթվան անցնելու խնդրում, այդ փորձի ընդհանրացումից հետո, անհրաժեշտաբար փոփոխություն կմտցվի աշխատանքի օրենսգրքում։

Հանձնարարվում է տարիֆ-տնտեսական բաժնին 1930 թ․ գարնանը գումարել համամիութենական խորհրդակցություն, քննարկելու անընդհատ արտադրական շաբաթին անցնելու արդյունքները և Աշխօրենսգրքի փոփոխությունները, վորը պետք է հիմնված լինի անցկացված գործնական փորձի վրա։

Նախագահությունը հանձնարարում է տարիֆ-տնտեսական բաժնին միջոցներ ձեռք առնել, վորպեսզի միությունների Կենտրոնական Կոմիտեները և Արհմիությունների խորհուրդներն անմիջապես անցնեն ներկա վորոշման կենսագործմանը և նաև այն մասին, վորպեսզի 1929—30 տնտեսական տարվա ստուգիչ թվերում, վոր ներկայիս քննվում են, հատկապես ի նկատի առնվեն նախատեսնելու բնակ-շինարարության և բանվորների կենցաղային կարիքների համար լրացուցիչ հատկացումներ, ըստ բանվորների քանակի աճման, վորպիսին նախատեսնվում է ստուգիչ թվերով, անընդհատ արտադրության անցնելու դեպքում։

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՏՆՏԳԵՐԽՈՐՀԻ № 843 ՀՐԱՀԱՆԳԸ ԱՆԸՆԴՀԱՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Խորհուրդների համամիութենական համագումարում հարց հարուցվեց անընդհատ արտադրական տարի սահմանելու և ձեռնարկությունների անընդհատ արտադրական շաբաթի փոխանցելու նպատակահարմարության մասին:*

*Հաշվի առնելով յեղած սարքավորումն ուժեղ չափով օգտագործելու խնդրի վողջ կարեվորությունը և կապիտալ շինարարության տեմպերի արագացումը, արդյունաբերությունը պետք է մաքսիմալ չափով հայտնաբերի անընդհատ արտադրական տարի սահմանելու հնարավորությունները և պետք է նախապատրաստի բոլոր անհրաժեշտ ձեռնարկումները: Առանձին ճյուղերում անընդհատ արտադրական շաբաթի անցնելու նպատակահարմարության չափը պարզելու և փոխանցումը մանրամասնորեն նախապատրաստելու ինչպես նաև արդյունաբերության թափի արագացման բոլոր այլ աղբյուրները լրիվ օգտագործելու հնարավորությունները 29—30 տարվա ստուգիչ թվերում արտահայտելու համար* հրամայում եմ:

*1. Պլանա-տնտեսական, գլխավոր-տեխնիկական գլխավոր վարչությունների, ԽՍՀՄ-ի Ժողտնտգերխորհի կոմիտեների անմիջապես ձեռնարկել արդյունաբերական ձեռնարկությունները անընդհատ արտադրական շաբաթի փոխանցելու խնդրի մշակումը:*

*2. Ցելակետ ունենալ յեղած սարքավորումն ավելի լրիվ օգտագործելու անհրաժեշտությունը, քննարկելով սարքավորման աշխատանքի ավելացման (հերթերի ավելացում, անընդհատ արտադրական շաբաթ և այլն) գոյություն ունեցող բոլոր յեղանակները:*

*3. Անընդհատ արտադրական շաբաթի փոխանցման հարցի մշակման ժամանակ, պետք է պարզել՝*

*ա) Ձեռնարկությունները հումույթով, վառելանյութով, գործիքներով և այլն ապահովելու հնարավորությունը:*

*բ) Սարքավորումն ավելի բեռնավորելու՝ նրա անընդհատ աշխատանքի և ընթացիկ հնարավորությունը:*

*գ) Բանվորական լրացուցիչ անհրաժեշտ ուժի ընտրությունը, բանվորական ու տեխնիկական պերսոնալի վորակյալ լրացուցիչ կադրերի պատրաստման ձեռնարկումների կիրառման հնարավորությունները և ձեռնարկություններն օժանդակ կադրով ապահովելը:*

*դ) Ձեռնարկությունների լրացուցիչ բանվորկան կադրերի բնակարաններով ապահովելու հնարավորությունները:*

*յե) Հիմնական ներդրումների լրացուցիչ սարդավորման, վերանորոգման և հումույթի հայթայթման և այլն անհրաժեշտ չափը:*

*զ) Արտադրության առանձին տեսակներն անընդհատ արտադրական շաբաթի փոխանցելու հետեվանքով ստացվող* տնտեսական եփեկտը *(արտադրանքի ավելացումը, ինքնարժեքի իջեցումը, ամորտիզացիա և այլն):*

*է) Անընդհատ արտադրության փոխանցման հետ կապված այլ դժվարությունները և նրանց վերացման ձեռնարկումները:*

ը) Հնարավոր բացասական ազդեցությունը ձեռնարկության արտադրական վիճակի վրա (բանվորական ուժի հոսունության ավելացումը, աշխատակիցների ավելի արագ փոփոխությունը և այլն) և նրանց վերացման հնարավորությունները:

թ) Սեզոնային արտադրության և սեզոնային աշխատանքներում սեզոնն ավելի լրիվ օգտագործելու հնարավորությունները:

ժ) Կապիտալ շինարարության մեջ անընդհատ բանվորական շաբաթ նա–խառնելու անհրաժեշտությունը:

ի) Փոխանցման հնարավոր լինելը և նրա նպատակահարմարությունը պարզելու դեպքում փոխանցումն իրագործելու կարգը և ժամկետները:

4. Ձեռնարկություններն անընդհատ արտադրական շաբաթի փոխանցելու հարցերի քննության դեպքում մշակել նաև անընդհատ աշխատանքի անցած ձեռնարկությունների աշխատանքի և հանգստի հերթականության ձևերը և ներկայումս գոյություն ունեցող վոչ աշխատանքային օրերի փոխարեն հնգօրյա աշխ. շաբաթի վեցերորդ օրվա հանգստի փոխանցման հնարավորությունը:

5. Առաջարկել գլխավոր վարչություններին և կոմիտեներին պլանա–տնտեսական վարչության ղեկավարությամբ յերեք օրվա ընթացքում մշակել այս հարցերը:

6. Առաջարկել պլանա–տնտեսական վարչությանը գիտական–տեխնիկական վարչության հետ միասին ի մի հավաքելով գլխավոր վարչությունների աշխատանքների փորձը, կազմել ընդհանուր ղեկուցում և համապատասխան ու անհրաժեշտ գործնական ձեռնարկումների հետ միասին ներկայացնել ինձ ս. թ. հուլիսի 15–ին:

7. Ներկա հրամանի կիրառման հսկողությունը հանձնարարում եմ ԽՍՀՄ Ժողտնտգերխորհի պլանա–տնտեսական վարչությանը:

Առաջարկում եմ միութենական հանրապետությունների Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդներին իրենց յենթակա ձեռնարկությունների նկատմամբ մշակել մատնանշված հարցերը:

ԽՍՀՄ Ժողտնտգերխորհի նախագահի

տեղակալ՝ ՌՈՒԽԻՄՈՎԻՉ

ԽՍՀՄ Ժողտնտգերխորհի Աշխինխարատիվ

Ֆինանսական Վարչության պետ՝ ՎԱՍԻԼՑՈՎ

Մոսկվա, 14 հունիսի 29 թ.

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՏՆՏԳԵՐԽՈՐՀԻ № 927 ՀՐԱՄԱՆԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԸՆԴՀԱՏ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԻ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անընդհատ աշխատանքները պետք է դգալիորեն հեշտացնի շինարարության առաջ դրված հիմնական խնդիրների լուծումը. այդ խնդիրներն են՝ աշխատանքի ընդհանուր տեմպի արագացումը, ֆինանսական միջոցների արագորեն ազատելը, մեքենաների և ոժանդակ կահավորման մաքսիմալ օգտագործումը:

Անընդհատ աշխատանքների ճիշտ կազմակերպումը շին-արդյունաբերության մեջ, ապահովում է շինարարական մեքենաների և կահավորման արագ օգտագործումը և նրանց օգտագործման ժամանակի յերկարացում 17 տոկոսի չափով:

Շինարարական նյութերի արդյունաբերական համապատասխան ճյուղերն անընդհատ աշխատանքի փոխանցելու հետեվանքով յերկարացնելով մեքենաների, դազգյահների և կահավորումն օգտագործելու ժամանակաշրջանը 15—17 տոկոսով, համապատասխան չափով ավելացնում է շինանյութերի արտադրանքը և դրանով իսկ ապահովում է շինարարական աշխատանքների կատարման և նրա ծավալման արագ տեմպերը:

Վերոհիշյալի հիման վրա առաջարկում եմ ընթացիկ շինարարական սեզոնում փոխանցել անընդհատ աշխատանքի շինարարությունը և շինանյութերի պատրաստման արդյունաբերության հետեվյալ ճյուղերը՝ ցեմենտի, կրի, աղյուսի, ալեբաստրի և կավիճի:

Անընդհատ աշխատանքների կազմակերպման ժամանակ հիմնականում նախատեսնել հետեվյալը՝

1. Բանվորական ուժի ավելացումը և նրա օգտագործումը կազմակերպել այնպես, վորպեսզի շինարարության և շինանյութերի պատրաստման ձեռնարկությունների բանվորների առանձին խմբերի և վողջ բանվորական ուժի համապատասխան մասը յուրաքանչյուր որ ստանա իր նորմալ հանգիստը:

2. Տեխնիկական պերսոնալի ստորին կազմի ավելացումը, այդ նպատակի համար շինարարության և շինանյութերի պատրաստման ձեռնարկությունների աշխատանքներում պետք է օգտագործել ուսանողներին, պրակտիկանտներին և աշխատանքների համապատասխան մասում մշտական աշխատող ավելի վորակյալ բանվորների:

3. Բոլոր այն դեպքերում, յերբ աշխատանքների նոր տեմպը պահպանելու համար անհնար է հաստիքները ճարտարապետ-տեխնիկական ուժերի համապատասխան քանակական կազմով լրացնելը (նրանց նորմալ տեմպով հանդիստ տալու տեսակետից), պետք է յերկարացնել ճարտարապետ-տեխ-

նիկական պերսոնալի բարձր կազմի աշխատողների արձակուրդը, տրամադրելով այդպիսին աշխատանքներին չխանգարելու տեսակետից հարմար ժամանակաշրջանում։

4. Հսկողություն սահմանել անընդհատ արտադրության անցնելու գործի վրա այն հաշվով, վորպեսզի ընթացիկ տարվա ընդհանրացված փորձի հիման վրա անհրաժեշտ ուղղումներ մտցրվի 1929—30 թ. անընդհատ աշխատանքների անցկացման պլանաչափ աշխատանքներում։

5. Կառուցող կազմակերպությունները և շինանյութեր պատրաստող ձեռնարկությունները 1929—30 թ. ստուգիչ թվերում պետք է նախատեսնեն շինարարության փոխանցումն անընդհատ աշխատանքների և դրան համեմատ կազմեն շինարարության մատակարարման, բանվորական ուժի ոգտագործման, բնակարաններով ապահովելու, աշխատանքների և ձեռնարկությունների ֆինանսավորման պլանները, գործիքների և մեքենաների ոգտագործման, անընդհատ արտադրության աշխատանքների սիստեմից բղխող—գործիքները և մեքենաներն ավելի լրիվ չափով ոգտագործելու հնարավորությունները և դրա հետ կապված շինարարության համար ներկայիս անհրաժեշտ համապատասխան քանակի գործիքների և մեքենաների պահանջի քանակի կրճատումը, կազմել տեխնիկական հսկողությունն ապահովելու անհրաժեշտ ձեռնարկումների պլանները և այլն։

6. Աշխատանքների պլանները պետք է վերակազմել այնպես, վորպեսզի շինանյութերով ապահովված լինելու տեսակետից աշխատանքներն ընթանան առանց ընդհատումների։

7. Առաջարկում եմ շինարարական կոմիտեներին և գլխավոր վարչություններին հսկողություն ունենալ սույն հրահանգի կիրառման վրա։

8. Առաջարկում եմ միութենական հանրապետությունների Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդներին, իրենց յենթակա ձեռնարկությունների նկատմամբ հրատարակել համապատասխան կարգադրություններ։

ԽՍՀ Միության Ժողտնտգերխորհի

Նախագահի տեղակալ՝ ԿԱՍԻՈՐ

ԽՍՀ Միության Ժողտնտգերխորհի

Շինարարական Կոմիտեյի պետ՝ ԲԱՐՍԿԻ

Մոսկվա, 4 հուլիսի 1929 թ.

## ԱՆԸՆԴՀԱՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԸ

(Ընդունված ԽՍՀ Միության Ժողտնտգերխորհի Հանձնաժողովի կողմից):

### ՓՈԽԱՆՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

*Ձեռնարկության փոխանցումն անընդհատ արտադրական շաբաթի, կարող է կատարվել միմիայն այն դեպքում, յերբ այդ խնդիրը մանրամասնորեն տեխնիկապես և կազմակերպչորեն մշակված է և յերբ փոխանցման բոլոր խնդիրները քննության են առնված արտադրական խորհրդակցություններում ու բանվորական ընդհանուր ժողովներում: Այս դեպքում միայն անընդհատ արտադրության փոխանցումը չի առաջացնի՝ դադար, գործալքումների ավելացում, ինչպես նաև չի վատացնի ինքնարժեքի իջեցումը և արտադրողականության բարձրացման ու արտադրանքի վորակի ցուցանիշները:*

*Յեթե անընդհատ արտադրության փոխանցումը տալիս է ավելի շատ արտադրանք քան նախատեսնված է ծրագրով, այդ դեպքում անհրաժեշտ է մանրամասնորեն մշակել ձեռնարկությունը հում նյութով մատակարարելու, ինչպես նաև նրա արտադրանքի սպառման բոլոր հնարավորությունները, և յեթե այդպիսով կապահովեն այդ հնարավորություններն այդ դեպքում ձեռնարկությունը պետք է փոխանցել անընդհատ կյանքի:*

### ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ԽՆԴԻՐԸ

*Անընդհատ արտադրության կիրառումը դեռ չի նշանակում, վոր բանվորական ուժը մեխանիկորեն պետք է ավելանա համապատասխան ձեռնարկության աշխատանքային օրերի ավելցման: Հավելյալ բանվորական ուժի պահանջն առաջին հերթին պետք է ծածկվի ձեռնարկության բանվորական ուժի ավելցուկների, բանվորական օրվա խտացումներով, բանվորներին իրենց վորակի համապատասխան ավելի նպատակահարմար օգտագործելով և արտադրողականությունը բարձրացնող ու ռացիոնալիզատորական և կազմակերպչական ձեռնարկումների կենսագործման միջոցով: Բանվորական ուժի մեխանիկորեն ավելացումը կարող է այնպիսի դրության առաջ կանգնեցնել, վորով հնարավորություն չի լինի կենսագործել արդյունաբերության առաջադրած վորակային ցուցանիշները, քանի վոր 29—30 տնտեսական ստուգիչ թվերի հիման վրա արտադրանքի 32%-ային ավելացումը պետք է կատարվի բանվորական ուժի 6%-ի ավելացումով:*

### ՀՈՒՄ ՆՅՈՒԹԻ ԽՆԴԻՐԸ

*Այն ձեռնարկություններում, վորտեղ կապված անընդհատ արտադրական շաբաթի հետ արտադրության լայնացումը հնարավոր չե հում նյութի*

բացակայության կամ արտադրանքի սպառման շուկա չունենալու պատճառով նրանց փոխանցումը եռ անընդհատ արտադրական շաբաթի, պետք է նույնպես նպատակահարմար համարել, չնայած վերոհիշյալ անբարենպաստ պայմանների: Այս դեպքում հնարավոր է դառնում ձեռնարկության աշխատանքները կենտրոնացնել ամենալավ և նոր մեքենաների վրա, վորոնց արտադրանքը վորակով ավելի յե լավանում, և հնարավորություն է ստեղծում ունենալ գործիքների պաշար և այլն:

## ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ

Դեֆիցիտային հում նյութի վրա աշխատող ձեռնարկությունների անընդհատ արտադրական կյանքի փոխանցելու ժամանակ առանձնակի ուշադրություն պետք է դարձնեն տվյալ արտադրությամբ ավելի քիչ ձեռնարկություններում կենտրոնացնելու խնդրի վրա. այդ դեպքում պետք է ապահովել լուծարքի յենթարկվող ձեռնարկությունների բանվորների փոխադրումը, լուծարքի չյենթարկվող ձեռնարկությունները:

Ձեռնարկությունների կենտրոնացումն առաջին հերթին պետք է կատարել այն դեպքում, յեթե միատեսակ ձեռնարկությունները գտնվում են մի քաղաքում և բանվորների փոխադրումը մի ձեռնարկությունից մյուսն առանձին դժվարությունների հետ չի կապված:

## 6-ԺԱՄՅԱ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՕՐ

Յեթե ձեռնարկությունը մոտ օրերում պետք է փոխանցվի 7-ժամյա աշխատանքների, այդ դեպքում աշխատանքային ռեժիմը 2 անգամ փոփոխման չյենթարկելու համար, անհրաժեշտ է 7 ժամի հետ միասին ձեռնարկությունը փոխանցել, անընդհատ արտադրական կյանքի:

Անընդհատ կյանքի փոխանցման կազմակերպչական ու տեխնիկական բոլոր խնդիրները, պետք է քննության առնվեն՝ ճարտարապետ-տեխնիկական սեկցիաներում, համագործարանային ցեխային հանձնաժողովներում, խորհրդակցություններում և բանվորական ընդհանուր ժողովներում:

Յերբեք թույլատրելի չէ միայն ադմինիստրացիայի կարգադրությամբ և առանց բանվորական մասսայի հասարակական կարծիքի, ձեռնարկությունը փոխանցել անընդհատ կյանքի: Պետք է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները, վորով կապահովվի անընդհատ կյանքի փոխանցած ձեռնարկության և նրա բանվորների ամենալավ սպասարկումը:

## 5-ՕՐՅԱԿԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է

Ժողկոմխորհի վորոշման հիման վրա, բոլոր ձեռնարկություններում պետք է մտցվի 5-օրյա արտադրական շաբաթ, այլ տեվողությամբ արտադրական շաբաթ կարող է սահմանվել միայն համապատասխան մարմինների թույլտվությամբ: 5 օրյա շաբաթի դեպքում բանվորներին պետք է բաժանել 5 հոգուց բաղկացած խմբերի, վորից յուրաքանչյուր օր աշխատելու յեն 4 հոգի, իսկ մեկը հանգստանալու յե:

## ՎՈՐԱԿՅԱԼ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Յեթե բանվորի թվի մեխանիկորեն ավելացումը ընդհանրապես չի թույլատրվում, ապա վորակյալ բանվորական ուժին այդ չի վերաբերվում,

վորովհետև այդպիսիները բոլորայում բացակայում են։ Ձեռնարկությունը առաջին հերթին բավարարվի իր ուժերով, ձեռնարկության վորակյալ բանվորական ուժի նպատակահարմար օգտագործման միջոցով։ Բացի այդ, անհրաժեշտ է կազմակերպել վերավորակավորման դասընթացներին և հատուկ ուշադրություն դարձնել, բանվոր յերիտասարդության վորակի բարձրացման գործին։

## ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ

Անընդհատ արտադրական կյանքի փոխանցման հետ միասին բարդանում է ճարտարապետ-տեխնիկների ուժերի աշխատանքները։ Վոչ մի խոսք չի կարող լինել այն մասին, վոր տեխնիկական պերսոնալն անընդհատ շաբաթում պետք է աշխատի առանց հանգստի, կամ թե նրանց հանգստի օրերի դիմացը կյերկարացվի նրանց տարեկան արձակուրդը և այլն։ Այս դժվարություններից դուրս գալու համար, անհրաժեշտ է պարզեցնել տեխնիկական պերսոնալի աշխատանքները, ազատելով նրանց այն ֆունկցիաներից, վորոնք կարող են կատարվել ավելի ցածր մասնագիտություն ունեցողների կողմից և այլն։

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Ներկա պայմաններում մեկ բանվորի տարեկան աշխատանքային ժամերը վորոշելիս, տարվա 365 օրից հանվում է՝

ա) 52 շաբաթական հանգիստը (կիրակիներ).

բ) 14 հեղափոխական տոներ և հանգստի (կրոնական) հատուկ օրեր։

Աշխատանքի Օրենսգրքի հիման վրա, տարեկան տրվում է 9 օր հեղափոխական տոներ և 5 հանգստի հատուկ օրեր, սակայն յերկու տոն օրերը ընկնում են, քանի վոր 7 տարվա ընթացքում միջին հաշվով յուրաքանչյուր տարին 2 հեղափոխական տոներ կամ հատուկ հանգստի օրեր ընկնում են կիրակի օրերը։

Մնացած 301 օրը բազմապատկվում է 8 ժամով,, ստացած գումարից դուրս է գցվում արձակուրդի 92 ժամը—(12 օրվա համար—10 օր 8-ական ժամից և յերկու օր 6-ժամից, վորպես կիրակի օրերի նախօրյակներ)։ Ցեվ 112 ժամ, վորը գոյանում է շաբաթական հանգստի և հեղափոխական օրերի նախօրյակի արտոնյալ ժամերից։ Վերցրված է 112 ժամ, վորովհետև հաշվի յե առնվել 56 նախօրյակի օրեր 2-ական ժամից—հետևյալ կերպ՝

ա) 50 շաբաթ օրեր (արձակուրդի մեջ մտնող 2 շաբաթը վորպես վոչ-բանվորական օրեր դուրս են գցված)։

2. Հեղափոխական 6 տոներ (Մայիսյան և Նոյեմբերյան օրերը հաշվի յեն առնվել մեկական օրով, բացի այդ 5 տարվա ընթացքում միջին հաշվով յուրաքանչյուր տարին հեղափոխական մեկ օր ընկնում է շաբաթ կամ կիրակի օրերը)։

Բանվորական ժամերի հաշվեառումը 7-ժամյա աշխատանքների դեպքում կատարվում են նույն կարգով. արձակուրդն այստեղ հաշվվում է 82 ժամ (10 օր 8-կան ժամից և 2 նախօրյակներ 6-ական ժամից)։ Իսկ յուրաքանչյուր շաբաթվա հանգստի, հեղափոխական և տոն օրերի նախօրյակների արտոնյալ տարեկան թիվը վերցված է 54։

Անընդհատ արտադրական շաբաթի փոխանցելու դեպքում մեկ բանվորի տարեկան աշխատանքային ժամերը վորոշելիս տարվա 365 որից դուրս է հանվում հեղափոխական 5 որերը վորպես վոչ աշխատանքային որեր:

Մնացած 360 որը բաշխվում է շաբաթվա որերի վրա (հաշվելով նրա մեջ նաև հանգստի որերը) և բազմապատկվում է համապատասխան շաբաթի որերի և ապա 8 ժամի վրա (աշխատանքային տևողությունը): Ստացված գումարից հանվում է բանվորական որ կամ 96 ժամ, որինակ 5-որյա շաբաթում 360 որը բաժանվում է 5-ի, ստացված 72 թիվը բազմապատկվում է 4-ի (5-որյա շաբաթի աշխատանքային որերի թիվը) և ապա 8 ժամի, ստացված 2304 ժամից հանվում է արձակուրդի 12 որերի վրա ընկնող 96 ժամը:

Գործարանը վերանորոգման համար կանգնած որերը (գրաֆիկներով նախատեսնված վերանորոգումը) էլ մեկ բանվորի տարեկան ընդհանուր աշխատանքային ժամերի գումարի հաշվից հանվում է: 7-ժամյա աշխատանքների պայմաններում բանվորական տարեկան ժամերի հաշվառումը կատարվում է նույն կարգով, սակայն արձակուրդը հաշվվում է 84-ժամ (բանվորական 12 որերը բազմապատկած 7 ժամի):

## ՀՆԳՕՐՅԱԿ

Հաշիվ № 1-ին

| ԳՈՐԾԱՐԱՆԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՉԿԱՆԳՆԵՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ | Ներկա պայմաններում | Անընդհատ արտադրական շաբաթի փոխանցելուց հետո: Ընդամենը | Անընդհատ արտադրական շաբաթի փոխանցելուց հետո: Փոփոխման %.%-ով |
|---|---|---|---|
| 1. Աշխատանքի ժամանակի տևողությունը մեկ տարում (մեկ բանվորի վրա, ժամերով) | | | |
| ա) 8 ժամյա բանվորական որում . . . . . . | 2.204 | 2.208 | + 0.2 |
| բ) 7 » » » . . . . . . | 1.966 | 1.932 | — 2,24 |
| 2. Հանգստի և արձակուրդի որերի թիվը . . . | 77 որ | 89 որ | +15,6 |
| Նրանցից | | | |
| ա) Հանգստի որեր . . . . . . . . . . | 65 — | 77 — | +12 որ |
| բ) Արձակուրդի աշխատանքային որեր . . . . | 12 — | 12 — | — |
| 3. Բանվորների թվի փոփոխումն % %-ով . . . | 100% | 125% | — |

Արտադրական այս շաբաթը պետք է կիրառել այն բոլոր ձեռնարկություններում, վորոնց կահավորման, սարքավորման դրությունը և նրա վերանորոգումը չի պահանջում գործարանի աշխատանքների դադարեցում կամ այնտեղ, վորտեղ կա պահեստի հավելյալ կահավորում և թե այն ձեռնարկություններում վորտեղ վերանորոգումը կարելի յե կատարել աշխատանքների ընթացքում: Այս դեպքում բանվորների աշխատանքային ժամանակի տարեկան հաշվեկշիռը 8-ժամյա աշխատանքների դեպքում լրիվ պահպանվում է ավել են աշխատում 8 ժամ իսկ 7-ժամյա աշխատանքներում աշխատում են քիչ պակաս 2 ժ.-ով կամ թե 1,63%-ով: Աշխատանքի ժամերի վոչ-լրիվ աշխատելը, փոխհատուցվում է ներկայիս շաբաթի ուրբաթ և շաբաթ որերի ցանց

արտադրողության դիմաց շաբաթական ավելի հաճախակի հանգստի օրեր տրամադրելով, վորոնք արտադրության դրությունը զգալիորեն թարձրացնում են։

Հանգստի օրերի թիվը 65-ից (ներկայիս) հասնում է 77-ի և սահմանվում է նրա համահավասար օգտագործումը։

Արձակուրդի տևողությունը բանվորական օրերով (12) պահպանվում է, սակայն ավելանում է որացուցային օրերը (14–15) նման ավելացումը բացատրվում է նրանով, վոր 5-օրյա շաբաթում, արձակուրդի 12 օրերի վրա ընկնում է հանգստի 3 օր։

## ՎԵՑՕՐՅԱԿ

Հաշիվ № 2

| ԳՈՐԾԱՐԱՆԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՁԿՆԳՆԵՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ | Ներկա արտադրության | Անընդհատ արտադրական շաբաթի փոխանցելուց հետո | |
|---|---|---|---|
| | | Ընդամենը | Փոփոխման %%-ով |
| 1. Աշխատանքի ժամանակի տևողությունը մեկ տարում (մեկ բանվորի վրա, ժամերով) | | | |
| ա) 8 ժամյա բանվորական օրում | 2·204 | 2·304 | +4,57% |
| բ) 7 » » » | 1·966 | 2·016 | −2,48% |
| 2. Հանգստի և արձակուրդի օրերի թիվը | 77 օր | 77 օր | — |
| Նրանցից | | | |
| ա) Հանգստի օրեր | 65 — | 65 — | — |
| բ) Արձակուրդի օրեր | 12 — | 12 — | — |
| 3. Բանվորների թվի փոփոխումը % %-ով | 100% | 120% | — |

## ՎԵՑՕՐՅԱԿ

Հաշիվ № 3

| ՑՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՄԻՍ ԳՈՐԾԱՐԱՆԸ ՄԵԿ ՕՐ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿԱՆԳՆԵՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ | Ներկա արտադրության | Անընդհատ արտադրական շաբաթը փոխանցելուց հետո | |
|---|---|---|---|
| | | Ընդամենը | Տարբերությունը %%-ով |
| 1. Աշխատանքի ժամանակի տևողությունը մեկ տարում (մեկ բանվորի վրա, ժամերով) | | | |
| ա) 8 ժամյա բանվորական օրում | 2·204 | 2·232 | +1,27% |
| բ) 7 » » » | 1·966 | 1·953 | −0,66% |
| 2. Հանգստի և արձակուրդի օրերի թիվը | 77 օր | 86 օր | 9 օր |
| Նրանցից | | | |
| ա) Հանգստի օրեր | 65— | 77 — | 9 — |
| բ) Արձակուրդի բանվորական օրեր։ | 12— | 12 — | — |
| 3. Բանվորների թվի փոփոխումը % %-ով | 100% | 120% | — |

Արտադրական այս շաբաթն անհրաժեշտ է գործադրել այն ձեռնարկություններում, վորտեղ սարքավորումը հնամաշ լինելու հետևանքով, գործարանը յուրաքանչյուր ամիս կարիք ունի վերանորոգման, դրա համար անհրաժեշտ է յուրաքանչյուր ամիս սահմանել վերանորոգման կարգ: Տարվա ընթացքում հաշվի յե առնված վերանորոգման համար 9 որ, վորովհետև հաշվի յե առնված 5 հեղափոխական որերում գործարանի դադարը վերանորոգման համար ոգտագործելու հնարավորությունները (22 հունվարի, մայիսի 1–2 և Նոյեմբերի 7–8–ը): Ձեռնարկության աշխատանքների դադարը վերանորոգման համար պետք է կանխապես նախատեսնված լինի գրաֆիկներում:

Այն ձեռնարկություններում վորտեղ վերանորոգումը հնարավոր է կատարել արտադրության ընթացքում, չի հարկավոր այնտեղ սահմանել արտադրական 6–որյա շաբաթ, քանի վոր դա մեկ բանվորի տարեկան աշխատանքային ժամերը նշանակալից չափով շատացնում է, վորը հակառում է ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների խորհրդի 26 ոգոստոսի վորոշմանը:

Այս արտադրական շաբաթի (վերանորոգման համար գործարանի անհրաժեշտ դադարը) հանգստի որերը 65–ից (ներկայիս) հասնում է 72-ի և սահմանվում և նրա համահավասար ոգտագործումը:

## ՅՈԹՕՐՅԱԿ

Հաշիվ № 4

| ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՄԻՍ ԳՈՐԾԱՐԱՆԸ 2 ՈՐ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿԱՆԳՆԵՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ | Ներկա դրությամբ | Անընդհատ արտադրական շաբաթի փոխանցելուց հետո | |
|---|---|---|---|
| | | Ընդամենը | Փոփոխման %%-ը |
| 1. Աշխատանքի ժամանակի տևողությունը մեկ տարում (մեկ բանվորի վրա ժամերով) | | | |
| ա) 8 ժամվա բանվորական որվա պայմաններում | 2.204 | 2.216 | +0,6 % |
| բ) 7 » » » » | 1.966 | 1.936 | −2,05% |
| 2. Հանգստի և արձակուրդի որերի թիվը . . . | 77 որ | 88 որ | +14,3 |
| Նրանցից | | | |
| ա) Հանգստի որեր . . . . . . . . | 65 — | 76 — | +11 որ |
| բ) Արձակուրդի աշխատանքային որեր . . . | 12 — | 12 — | — |
| 3. Բանվորների թվի փոփոխումն % %-ով . . | 100% | 116,6% | — |

Արտադրական նման շաբաթ կարելի յե կիրառել միայն այն ձեռնարկություններում, վորոնց կահույքը ֆիզիքապես չափազանց հնացած լինելու հետևանքով ավելի հաճախ է վերանորոգում պահանջում, ավելի ճիշտ 15 որը մեկ անգամ կարիք է զգացվում դադարեցնել ձեռնարկության աշխատանքները վերանորոգում կատարելու համար:

Այս հաշվում նկատի յե առնված տարվա ընթացքում միայն 20 վերանորոգման որեր, (վերցված է 20 որ), վորովհետև հաշվի յե առնված հեղափո–

խական տոն օրերի ժամանակ (հունվարի 22-ը, մայիսի 1-2 և նոյեմբերի 7-8-ը) գործարանի դադարի 3 օրը ևս օգտագործել վերանորոգման համար։

Ձեռնարկության աշխատանքների դադարեցնելը, աշխատանքների գրաֆիկներում կանխապես պետք է նախատեսնված լինի։

Այն ձեռնարկություններում, վորտեղ վերանորոգումը կարող է կատարվել արտադրության ընթացքում կամ թե վերանորոգման համար բավական է մեկ օր, այդտեղ 7-օրվա արտադրական շաբաթը չը պետք է ընդունել, քանի վոր այդ դեպքում մի բանվորի տարեկան աշխատանքային ժամերը կավելանա, վորը հակասում է ԽՍՀ Միության Ժողկոմխորհի 1929 թ. 26 օգոստոսի վորոշմանը։

## ԱՆԸՆԴՀԱՏ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԸ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Անընդհատ արտադրական շաբաթի անցնելու և հնգօրյա շաբաթ սահմանելու դեպքում բանվորների և ծառայողների մեկ հինգերորդ մասը յուրաքանչյուր օր ազատվելու յե իր հերթական հանգստի օրով։ Հաշվի առնելով այդ հանգամանքը, անհրաժեշտ է փոփոխման յենթարկել հասարակական կազմակերպությունների յոթօրվա օրցուցային աշխատանքների կարգը, այստեղ ևս սահմանելով ձեռնարկության արտադրական շաբաթի տեվողության կարգը։

Ձեռնարկության հասարակական կազմակերպությունների աշխատանքներն այնչափ բազմապիսի յեն, վոր հնգօրյա շաբաթում նա յերբեք չի կարող տեղավորվել։ Այդ պատճառով անհրաժեշտ է ընդունել ավելի յերկար ժամանակաշրջան, վորի ընթացքում հնարավոր լինի դումարել բոլոր կազմակերպությունների նիստերը, չխանգարելով մյուս կազմակերպությունների աշխատանքներին։ Նման ժամանակաշրջան, վորում կարելի լինի տեղավորել բոլոր կազմակերպությունների աշխատանքները՝ դա յերկու հնգօրյակների ժամանակաշրջանն է, կամ տասնօրյա (տասնօրյա օրացուցային ժամանակաշրջան)։

Ցեթե գործարկոմ-տեղկոմի նիստների համար սահմանվում է հոկտեմբերի 1-ը այդ դեպքում մյուս հերթական նիստերը ինչպես կանոն պետք է կայանա հոկտեմբերի 11-ին, 21-ին, 31-ին և այլն այսինքն 9 օր անց 10-րդ օրը։

Միայն տասնօրյա օրացուցային ժամանակաշրջանում կարելի յե ստեղծել այնպիսի դրություն, վորպեսզի ավյալ կազմակերպության անդամին հանգստի օր տրամադրվի կազմակերպության նիստերի օրերից դուրս։

Օրինակ՝ բանվոր (ծառայող) Թոքմաջյանը հանդիսանում է գործարկոմի անդամ, վերջինիս նիստերը կայանում են հոկտեմբերի 1-ին, 11-ին, 21-ին և այլն։ Այդ դեպքում կարելի յե բանակցել աշխատբաշխի հետ, վորպեսզի ընկ. Թոքմաջյանին հանգստի օր տրամադրվի անպայմանորեն մի այլ օր, հետագայում, այնչափ, վորչափ գործարկոմի նիստերը կայանալու յե յուրաքանչյուր 10-որը մեկ, իսկ աշխատանքային շաբաթը սահմանված է հնգօրյա, ընկ. Թոքմաջյանը լայն հնարավորություն է ունենալու չկորցնելով յուր հանգստի օրը, գործարանում աշխատելուց հետո, մասնակցել գործարկոմի նիստերին։

Բազմաթիվ դեպքեր են պատահում, յերբ մեկ բանվորը հանդիսանում է

3 կազմակերպությունների անդամ․ այդ դեպքում անհրաժեշտ է 1 կազմակերպության նիստերը նշանակել հնգօրյակի առաջին օրը, իսկ յերկրորդ կազմակերպության նիստերը հնգօրյակի յերկրորդ օրը և այլն: Այս դեպքում անհրաժեշտ է հոկտեմբերի 1-ը տվյալ բանվորի համար սահմանել վորպես աշխատանքային օր, վորպեսզի հիշյալ կազմակերպության նիստերը հետագայում մեխանիկորեն ընկնեն բանվորական (աշխատանքային) օրերում:

Ստորև բերված օրինակելի օրացույցում ուսման համար սահմանված են յերկու օր—3-րդ և 9-րդ օրերը:

Հասարակական կազմակերպությունների աշխատանքների այս օրինակելի աղյուսակը հնարավորություն է սահմանում վոչ միայն պահպանել ձեռնարկության հասարակական և կուլտուրական աշխատանքների ներկայիս տեմպը, այլև ապահովում է նրա հետագա բարձրացումը:

Առանձին ձեռնարկություններում հասարակական կազմակերպությունների աշխատանքների կարգը սահմանելիս հաշվի առնելով ձեռնարկի առանձնահատուկ պայմանները, հիշյալ օրինակելի օրացույցի մեջ կարող են մտցրվել անհրաժեշտ փոփոխումներ:

(Տես եջ 39-ի աղյուսակը)

## ՄԻ ՔԱՆԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՐԱՖԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### 1. ԻՆՉ ԿԵՐՊ ՊԵՏՔ Ե ՎԱՐՎԵԼ, ՅԵԹԵ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏՈՆ ՈՐՆ ԸՆԿՆՈՒՄ Ե ԲԱՆՎՈՐԻ ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՆԳՍՏԻ ՈՐԻ ՀԵՏ

Յեթե բանվորի հանգստի օրը և հեղափոխական տոն օրն ընկնում է միևնույն օրը պարզ է, վոր բանվորը կորցնում է մեկ հանգստի օր, այդ դեպքում նրա հանգստի օրը պետք է փոխհատուցվի մեկ ուրիշ օրով․ ընդհանրապես ինչպես կանոն հեղափոխական տոն օրերն արտադրական շաբաթվա օրերի հաշվից պետք է հանել, այդ դեպքում աշխատանքի օրը յերբեք չի ընկնի հեղափոխական օրվա մեջ:

### 2. ՀԵՐԹԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ձեռնարկությունը յերկու և ավել հերթով աշխատելու դեպքում, բանվորների փոխադրումը մեկ հերթից մյուսի, նպատակահարմար է կատարել նրանց շաբաթական հանգիստն օգտագործելուց հետո: Այս դեպքում հնարավորություն է ստեղծվում ապահովել բանվորներին շաբաթական և օրական նորմալ հանգիստ տրամադրելու գործը: Շաբաթական հանգստի հետ չկապված հերթերի փոփոխումը զգալիորեն կրճատում է հանգստի տևողությունը, ձեռնարկության աշխատանքների յերկու հերթի դեպքում, շաբաթական հագստի տևողությունը կարող է լինել վոչ ավելի, քան 32 ժամ, իսկ աշխատանքների յերեք հերթի պայմաններում՝ վոչ ավելի, քան 24 ժամ:

# ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՕՐԱՑՈՒՅՑ

| Ամիս / Օր | ՆՈՅԵՄԲԵՐ | | | | ԴԵԿՏԵՄԲԵՐ | | | | ՀՈՒՆՎԱՐ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1) Կոմկուսակցության բջիջի բյուրոյի նիստ։ Փոխոգնդրամարկղի վարչության նիստ և ռազմական օր | — | 12 | 22 | — | — | 2 | 12 | 22 | 1 | 11 | 21 | — |
| | — | Երեքշաբթի | Ուրբաթ | — | — | Երկուշաբ. | Հինգշաբ. | Կիրակի | Չորեքշաբթի | Շաբաթ | Երեքշաբթի | — |
| 2) Ցեխ բջիջների բյուրոների նիստ. ԼԿԵՄ բջիջի բյուրոյի նիստը և կամավոր ընկերությունների բյուրոների նիստ։ | 1 | 13 | 23 | — | — | 3 | 13 | 23 | — | 12 | 23 | — |
| | Ուրբաթ | Չորեքշաբթի | Շաբաթ | — | — | Երեքշաբթի | Ուրբաթ | Երկուշաբ. | Հինգշաբ. | Կիրակի | Հինգշաբ. | — |
| 3) Ուսման օր | 2 | 14 | 24 | — | — | 4 | 14 | 24 | 3 | 13 | 24 | — |
| | Շաբաթ | Հինգշաբ. | Կիրակի | — | — | Չորեքշաբթի | Շաբաթ | Երեքշաբթի | Ուրբաթ | Երկուշաբ. | Ուրբաթ | — |
| 4) Գործարկոմի հանձնաժողովների նիստը։ | 3 | 15 | 25 | — | — | 5 | 15 | 25 | 4 | 14 | 25 | — |
| | Կիրակի | Ուրբաթ | Երկուշաբ. | — | — | Հինգշաբ. | Կիրակի | Չորեքշաբթի | Շաբաթ | Երեքշաբթի | Շաբաթ | — |
| 5) Ընդհանուր կամ պատգամավորական ժողովներ. | 4 | 16 | 26 | — | — | 6 | 16 | 26 | 5 | 15 | 26 | — |
| | Երկուշաբ. | Շաբաթ | Երեքշաբթի | — | — | Ուրբաթ | Երկուշաբ. | Հինգշաբ. | Կիրակի | Չորեքշաբթի | Կիրակի | — |
| 6) Գործկոմի կուս. հանձնաժողովների նիստ | 5 | 17 | 27 | — | — | 7 | 17 | 27 | 6 | 16 | 27 | — |
| | Երեքշաբթի | Կիրակի | Չորեքշաբթի | — | — | Շաբաթ | Երեքշաբթի | Ուրբաթ | Երկուշաբ. | Հինգշաբ. | Երկուշաբ. | — |
| 7) Կուսակցական օր | 6 | 18 | 28 | — | — | 8 | 18 | 28 | 7 | 17 | 28 | — |
| | Չորեքշաբթի | Երկուշաբ. | Հինգշաբ. | — | — | Կիրակի | Չորեքշաբթի | Շաբաթ | Երեքշաբթի | Ուրբաթ | Երեքշաբթի | — |
| 8) Կոմյերիտ օր | 9 | 19 | 29 | — | — | 9 | 19 | 29 | 8 | 18 | 29 | — |
| | Շաբաթ | Երեքշաբթի | Ուրբաթ | — | — | Երկուշաբ. | Հինգշաբ. | Կիրակի | Չորեքշաբթի | Շաբաթ | Չորեքշաբթի | — |
| 9) Ուսման օր | 10 | 20 | 30 | — | — | 10 | 20 | 30 | 9 | 19 | 30 | — |
| | Կիրակի | Չորեքշաբթի | Շաբաթ | — | — | Երեքշաբթի | Ուրբաթ | Երկուշաբ. | Հինգշաբ. | Կիրակի | Հինգշաբ. | — |
| 10) — | 11 | 21 | — | — | 1 | 11 | 21 | 31 | 10 | 20 | 31 | — |
| | Երկուշաբ. | Հինգշաբ. | — | — | Կիրակի | Չորեքշաբթի | Շաբաթ | Երեքշաբթի | Ուրբաթ | Երկուշաբ. | Ուրբաթ | — |

Նոյեմբերի 7-ը, 8-ը և հունվարի 22-ը վորպես վոչ աշխատանքային օրեր օրացույցից դուրս են ձգված։

## 3. ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՆԳՍՏԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ա) Մեկ հերթի աշխատանքներում՝ *ութժամյա աշխատանքների դեպքում բանվորի շաբաթական հանգստի տևողությունը կկազմի 40 ժամ: Այդ ստացվում է հետևյալ կերպ (գրաֆիկ № 1-ին)՝ Ա բանվորն ստանում է իր հանգստի օրը հինգշաբթի, ամսի 5-ին, այս դեպքում նա իր աշխատանքներն ավարտում է չորեքշաբթի, ամսի 4-ին, ժամի 16-ին, իսկ աշխատանքի յե անցնում ուրբաթ, ամսի 6-ին, առավոտյան ժամի 8-ին, տվյալ դեպքում նրա հանգիստը կազմում է՝ չորեքշաբթի՝ 8 ժամ, հինգշաբթի՝ 24 ժամ և ուրբաթ՝ 8 ժամ (ընդամենը 40 ժամ 8+24+8):*

բ) Երկու հերթի աշխատանքներում, *շաբաթական հանգստի տևողությունը յերկու շաբաթվա ընթացքում միջին հաշվով 8 ժամվա աշխատանքների պայմաններում կկազմի 40 ժամ, այդ ստացվում է հետևյալ կերպ (գրաֆիկ № 2) Ա բանվորն իր շաբաթական հանգիստը չորս օրվա աշխատանքից հետո ստանում է հինգշաբթի, առավոտյան հերթին, իսկ հետո 4 օր յերեկոյան հերթում աշխատելուց հետո, յերեքշաբթի, ամսի 10-ին դուրս է գալիս աշխատանքի:*

Առավոտյան հերթից յերեկոյան հերթին փոխադրվելու ժամանակ՝ *Ա բանվորն իր աշխատանքներն ավարտում է չորեքշաբթի, ամսի 4-ին, ժամի 11-ին, իսկ աշխատանքի յե անցնում յերեկոյան հերթում՝ ուրբաթ, ամսի 6-ին, ժամի 16-ին:*

*Հանգիստը կազմվում է հետևյալ կերպ՝ չորեքշաբթի՝ 8 ժամ, հինգշաբթի՝ 24 ժամ և ուրբաթ՝ 16 ժամ, ընդամենը (8+24+16)՝ 48 ժամ:*

Յերեկոյան հերթից առավոտյան հերթի փոխադրվելու ժամանակ՝ *Ա-ն ավարտում է իր աշխատանքները յերկուշաբթի, ամսի 9-ին, ժամի 4-ին. իսկ առավոտյան հերթում աշխատանքի յե անցնում՝ չորեքշաբթի, ամսի 11-ին, ժամի 8-ին, հանգիստը կազմում է՝ յերկուշաբթի օրը 0 ժամ, յերեքշաբթի՝ 24 ժամ և չորեքշաբթի՝ 8 ժամ. իսկ ընդամենը (0+24+8)՝ 32 ժամ:*

*Յերկու շաբաթվա շաբաթական միջին հանգստի տևողությունը կազմում է 48+32:2 հավասար է 40 ժամի:*

*գ) Յերեք հերթի աշխատանքներում, ութժամյա աշխատանքների պայմաններում շաբաթական հանգստի տևողությունը միջին հաշվով յերեք շաբաթվա ընթացքում կկազմի 40 ժամ: Դա ստացվում է հետևյալ կերպ (գրաֆիկ № 3) Ա բանվորն իր հանգստի օրը գիշերային հերթում չորս օր աշխատելուց հետո ստանում է հինգշաբթի, ամսի 5-ին, ապա առավոտյան հերթին՝ չորս օր աշխատելուց հետո, յերկուշաբթի, ամսի 10-ին և ապա յերեկոյան հերթին չորս օր աշխատելուց հետո՝ ամսի 15-ին:*

Գիշերվա հերթից առավոտյան հերթը փոխադրվելու ժամանակ՝ *Ա բանվորն ավարտում է իր աշխատանքները չորեքշաբթի, ամսի 4-ին, ժամի 8-ին. իսկ անցնում է աշխատանքների՝ ուրբաթ, ամսի 6-ին, ժամի 8-ին. Հանգիստը կազմում է չորեքշաբթի՝ 16 ժամ, հինգշաբթի՝ 24 ժամ և ուրբաթ 8 ժամ, ընդամենը (16+24+8)՝ 48 ժամ:*

Առավոտյան հերթից յերեկոյան հերթին փոխադրվելու դեպքում՝ *Ա բանվորն ավարտում է իր աշխատանքները յերկուշաբթի, ամսի 9-ին, ժամի 16-ին և անցնում է աշխատանքի յերեկոյան հերթում՝ չորեքշաբթի, ամսի 11-ին, ժամի 16-ին. Հանգիստը կազմում է՝ յերկուշաբթի՝ 8 ժամ, յերեքշաբթի՝ 24 ժամ և չորեքշաբթի՝ 16 ժամ, ընդամենը (8+24+16)՝ 48 ժամ:*

Ցերեկոյան հերթից գիշերվա հերթին փոխադրվելու դեպքում՝ Ա *բանվորն ավարտում է իր աշխատանքները շաբաթ, ամսի 14-ին, ժամի 24-ին և աշխատանքի յե անցնում գիշերային հերթում՝ յերկուշաբթի, ամսի 16-ին, ժամի 0. Հանգիստը կազմում է՝ շաբաթ՝ 0 ժամ, կիրակի՝ 24 ժամ և յերկուշաբթի՝ 0 ժամ, ընդամենը (0+24+0)՝ 24 ժամ: Յերեք շաբաթվա շաբաթական հանգստի միջին տևողությունը կազմում է (48+48+24:3)՝ 40 ժամ:*

*(Տես էջ 42—49)*

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Անընդհատ արտադրական շաբաթի կիրառումն աշխատանքային օրենսդրության մեջ կմտցնի հետևյալ հիմնական փոփոխությունները:*

1) *Շաբաթական հանգստի և հեղափոխական տոն օրերի նախօրյակի արտոնյալ ժամերի վերացումը: Դրա փոխարեն արտադրվում է շաբաթական հանգստի օրեր տրամադրելը և նրա օգտագործման մեջ մտցվում է համահավասար բաշխում ամբողջ տարվա ընթացքում:*

2) *Հեղափոխական տոն օրերը կրճատվում են մինչև 5-ի, այդ օրերին ձեռնարկությունների աշխատանքները դադարեցվում են:*

3) *Նոր տարվա և հանգստի հատուկ օրերի (կրոնական) օգտագործումը վերանում է:*

4) *Աշխատանքի օրենսգրքի հին խմբագրությունը վորտեղ ասվում է «շաբաթների» «յերկու շաբաթի» մասին և այլն, պետք է անպայմանորեն փոխվի, և նրա փոխարեն գործադրվի բանվորական օրերի համապատասխան թվերը (բանվորական 6-որ, բանվորական 12-որ և այլն):*

5) *Փոփոխման յենթակա հիմնական կետերից մեկը՝ դա շաբաթվա 42-ժամերի հանգստի անընդհատ տևողության խնդիրն է: Ժողկոմխորհի վորոշման հիման վրա անընդհատ արտադրական շաբաթի անցած ձեռնարկություններում և հիմնարկություններում շաբաթվա անընդհատ հանգստի տևողությունը պետք է լինի վոչ պակաս քան 39-ժամ: 6-ժամյա բանվորական օրվա պայմաններում, հանգստի 42-ժամյա անընդհատ տևողությունը պահպանվում է:*

---

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԳՐԱՖԻԿՆԵՐԸ

## Հ Ն Գ Օ Ր Յ Ա Կ

